ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Բաժին առաջին. ԵՊՀ ռեկտորի տարեկան հաշվետվություն..... 4

Կրթություն..... 7

Գիտություն 20

Համալսարանական միջավայր.....27

Համագործակցություն 36

Բաժին երկրորդ. ԵՊՀ ռազմավարական ծրագրի 2022-2023 ուսումնական տարվա կատարողական..... 41

Ռազմավարական նպատակ 1. Բարձրորակ կրթություն..... 41

Ռազմավարական նպատակ 2. Գիտություն և նորարարություն 58

Ռազմավարական նպատակ 3. Հանրային ներգրավում 70

Բաժին առաջին.
ԵՊՀ ռեկտորի տարեկան հաշվետվություն

Բաժին առաջին. ԵՊՀ ռեկտորի տարեկան հաշվետվություն

Ներածություն

Հաշվետու ժամանակաշրջանը կարելի է բնութագրել որպես համակարգային լուծումների և փոփոխությունների ժամանակահատված: 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում ԵՊՀ-ում մեկնարկել են մի շարք գործընթացներ, որոնց երկարաժամկետ ազդեցությունը էապես բարելավելու է կրթական ու գիտահետազոտական գործընթացների որակը, հնարավորություն է ստեղծելու համակարգված և համապարփակ մոտենալու բարեփոխումների ընթացքին:

Իրականացված գործողությունների հիմքում ընկած են մի շարք կարևոր սկզբունքներ, որոնք ուղղորդող դեր ունեն ամենօրյա աշխատանքի կազմակերպման, թիմային ջանքի գործադրման և երկարաժամկետ նպատակներն ավելի հստակ ուրվագծելու տեսանկյունից:

Առաջին հիմնական սկզբունքն ուսանողակենտրոնությունն է: Այս սկզբունքը բովանդակությամբ լցնելն առանցքային է համալսարանի գործունեության զարգացման արդյունավետ ընթացքի համար թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ հեռանկարներում: Ուսանողակենտրոնության ամրապնդումը, նախ և առաջ, ենթադրում է կրթական գործընթացում ուսանողի ներգրավման ու պատասխանատվության ավելացում: Այս տեսանկյունից հաշվետու ժամանակահատվածում իրականացված գործողությունները չափազանց կարևոր են ինքնուրույն աշխատանքի, առարկաների ընտրության հարցում ավելի լայն ազատությունների, ինչպես նաև կիրառվող կրթական նոր մեթոդների տեսանկյունից: Մենք ակնկալում ենք, որ ուսանողներն իրենց ուսումնառության և կրթական հետագծի ձևավորման գործում կլինեն ավելի նախաձեռնող ու ակտիվ, և փորձում ենք ստեղծել այդ ակտիվության համար անհրաժեշտ պայմանները: Ի լրումն լսարանային բեռնվածության նվազեցման և կամընտրական ընդհանրական ու մասնագիտական առարկաների շրջանակի ընդլայնման՝ համալսարանն ուսանողներին առաջարկում է նաև անհրաժեշտ գործիքակազմ, զարգացնում քննադատական մտածողությունը, խթանում ստեղծագործականությունը, աջակցում ակադեմիական գրագրության ոլորտում, ստեղծում փորձնակության և կամավորական աշխատանքի բազմաթիվ հնարավորություններ:

Երկրորդ կարևոր սկզբունքը միջգիտակարգային մոտեցումն է: Այս մոտեցման խթանումը ժամանակակից աշխարհում այլընտրանք չունի. միայն մեկ ոլորտից տեղյակ մասնագետը աստիճանաբար կորցնում է իր մրցունակությունն աշխատաշուկայում: Ուստի չափազանց կարևոր է ստեղծել հնարավորություններ

տարբեր գիտակարգերի շրջանակների համադրման համար: Միջգիտակարգային մագիստրոսական թեզերի, կրթական ծրագրերի խորքային վերանայման, միջգիտակարգային հետազոտությունների հարթակների ձևավորման գործընթացները, որոնք իրականացվել են հաշվետու ժամանակահատվածում, էապես նպաստել են այս կարևոր սկզբունքի պահպանմանը ԵՊՀ-ում:

Երրորդ սկզբունքն է կրթական ու գիտահետազոտական գործընթացների մոտարկումը: Այս սկզբունքը երկու չափազանց կարևոր հնարավորություն է ստեղծում. նախ՝ ուսանողները պրակտիկ հնարավորություն են ստանում փորձարկելու ստացված տեսական գիտելիքները հետազոտական տարբեր նախագծերում ընդգրկվելու միջոցով, իսկ գիտահետազոտական գործունեության արդյունքների արտացոլումը կրթական գործընթացում հնարավորություն է տալիս շարունակաբար զարգացնելու ուսումնական ընթացքը, համալրելու այն նոր մտքերով, գաղափարներով ու արդյունքներով: Այս սկզբունքի կիրառումն անմիջական ազդեցություն է ունենում ինչպես ուսանողների, այնպես էլ պրոֆեսորադասախոսական անձնակազմի վրա: Առաջին դեպքում ուսանողները ստանում են բազմաթիվ հնարավորություններով հագեցած ուսումնական գործընթաց, իսկ երկրորդները լսարանն օգտագործում են որպես հետազոտական արդյունքների հաղորդակցման տիրույթ ու սնվում լսարանից նոր գաղափարներով հետազոտական գործընթացում առաջ շարժվելու համար:

Չորրորդ սկզբունքը համալսարան-արտաքին աշխարհ կապն է: Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ-ն բազմաթիվ հաջողություններ է գրանցել ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային գործընկերների հետ համագործակցության ամրապնդման ոլորտում: Ստեղծված բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում համալսարանը կարողացել է արդյունավետ համագործակցություն զարգացնել համաշխարհային քաղաքականության տարբեր բևեռներում գտնվող գործընկերների հետ: Ավելին, աշխարհաքաղաքական փոփոխությունների համատեքստում ԵՊՀ-ն իր գործընկերներին առաջարկում է համագործակցության նոր հնարավորություններ և մեխանիզմներ: Այս առումով կարևոր հնարավորություններ են ստեղծվում ԵՊՀ բանասիրական ֆակուլտետների համար. ռուսերենի և պարսկերենի դասընթացները չափազանց հետաքրքիր են դարձել ամերիկյան ու եվրոպական գործընկեր համալսարանների համար: Սրա հետ մեկտեղ ստեղծվել են հնարավորություններ զարգացնելու տարածաշրջանագիտական ուղղությունները Հարավային Կովկասի, Մերձավոր Արևելքի, եվրասիական տարածաշրջանի ուսումնասիրությունները նոր ելակետային դիրքերից: Համագործակցային հնարավորություններն օգտագործելուն զուգահեռ՝ համալսարանը շարունակում է զարգացնել իր

երկարամյա համագործակցությունը բազմաթիվ երկարաժամկետ գործընկերների հետ: Ռուսաստանյան կրթական համակարգի առաջատար Մոսկվայի պետական համալսարանի հետ համագործակցության հուշագրի կնքումը դրա վառ ապացույցն է:

Միջազգային համագործակցությանը զուգահեռ՝ համալսարանը շարունակաբար ընդլայնում է իր ներհայաստանյան համագործակցության շրջանակը: Հաշվետու ժամանակահատվածում բազմաթիվ նոր նախաձեռնություններ են մեկնարկել ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ոլորտի գործընկերների հետ: Հատկանշական է, որ ուսանողական փորձնակության ծրագրերին և կարիերայի հնարավորություններին զուգահեռ՝ աստիճանաբար զարգանում է նաև հետազոտական պատվերների, գիտելիքի և տեխնոլոգիաների փոխանցման ոլորտի համագործակցությունը: Այս առումով առավել ցայտուն է ԵՊՀ համագործակցությունը «PMI Science» ընկերության հետ:

Վերջին կարևոր սկզբունքը ներքին միջավայրի զարգացումն է, որն անկյունաքարային է երկարաժամկետ հեռանկարում համալսարանի առաջխաղացման տեսանկյունից: Ֆիզիկական ենթակառուցվածքների բարելավումը, նյութատեխնիկական բազայի թարմացումը, թվային նոր գործիքների ներդրումը, ինչպես նաև համալսարանական մեծ անձնակազմի համար սոցիալական պատասխանատվության ստանձնումն էականորեն ազդում են համալսարանի ներսում աշխատանքային միջավայրի, հաղորդակցության բարելավման ու աշխատանքային ընթացքի օպտիմալացման վրա: Այս տեսանկյունից համալսարանում մեկնարկած փոփոխություններն ակներև են:

Ինչպես կարելի է եզրակացնել վերը նկարագրածից, հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ-ում իրականացվել են լայնածավալ ու համակարգային փոփոխություններ, որոնք արդեն իսկ տալիս են դրական արդյունքներ: Սակայն հարկ է նշել, որ մեկնարկած փոփոխություններն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է մարդկային, մասնագիտական, մեթոդաբանական, նյութական և հաղորդակցական նշանակալի միջոցների ներդրում, և առաջիկա տարիներին համալսարանի մեծ թիմը շարունակելու է իր աշխատանքը՝ հավատարիմ մնալով վերը նշված հիմնական սկզբունքներին:

Կրթություն

Հավատարիմ մնալով ուսանողին հետազոտահենք կրթություն տրամադրելու առաքելությանը՝ մեր ծրագրերը միտված են մրցունակ գիտելիք և հմտություն տրամադրելուն, որոնք ուսանողին հնարավորություն կտան դրական ներդրում ունենալու պետության և հասարակության զարգացման գործում:

2022-23 ուստարում առկա ուսուցման համակարգով ԵՊՀ բակալավրիատ ընդունվել է 2354, իսկ մագիստրատուրա՝ 658 ուսանող: Հեռակա ուսուցման համակարգով բակալավրիատ ընդունվել է 262, մագիստրատուրա՝ 115 ուսանող: Առկա ուսուցման համակարգով ասպիրանտուրա է ընդունվել 46, հեռակա ուսուցման համակարգով՝ 12 ասպիրանտ: Առկա ուսուցման համակարգով ԵՊՀ ԻՄ է ընդունվել 185 դիմորդ, հեռակա ուսուցման համակարգով՝ 45 դիմորդ:

Ընդունելության շեմը բարձրացնելու ռազմավարական խնդրից ելնելով՝ հաշվետու տարում նվազեցվել է պլանային տեղերի քանակը: Որոշ կրթական ծրագրերի համար վերանայվել են մուտքային պայմանները:

Բարձր ներուժ ունեցող դիմորդների ներգրավումն ապահովելու համար հաշվետու տարում հանրակրթական առարկաների գծով կազմակերպվել է «ԵՊՀ

աշակերտական օլիմպիադա-2023»-ը, որին մասնակցել են 1782 աշակերտներ: Օլիմպիադայում հաղթած 76 աշակերտներ պարգևատրվել են I, II, III կարգի դիպլոմներով, ինչը նրանց հնարավորություն է տվել առաջին կուրսում ստանալու ուսման վարձի համապատասխանաբար 50, 40, 30 տոկոսի չափով փոխհատուցում:

Մասնագիտական կողմնորոշման ու դեպի ԵՊՀ ուղղորդելու համար կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ հանդիպումներ, այցելություններ, էքսպոներ, անցկացվել է «ԵՊՀ օրեր մարզերում» ծրագիրը, որի շրջանակում համալսարանականներն այցելել են բոլոր մարզեր, դիմորդներին ներկայացրել ԵՊՀ կրթական ծրագրերն ու ընձեռած հնարավորությունները:

Հաշվետու ժամանակահատվածում ուժի մեջ է մտել Ուսումնական գործընթացի կազմակերպման նոր կարգը, որի համաձայն՝ վերջնարդյունքների գնահատման համար գործում է բազմագործոն համակարգ: Կարգով անցողիկ միավորը սահմանվել է 10-ը: Բացի դրանից՝ ըստ նոր կարգի՝ դասընթացի գնահատման բաղադրիչները և դրանց հատկացվող միավորներն ընտրում է դասավանդող դասախոսը:

Մշակվել ու Գիտական խորհրդի կողմից հաստատվել են ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի կառուցվածքներն ու բովանդակությունները, որոնք ուժի մեջ են մտել այս տարվա սեպտեմբերի մեկից: Որոշմամբ սահմանված մի շարք փոփոխություններից է 6-7-րդ կիսամյակներում նախատեսված

«Շարժունության պատուհանը», ինչը հնարավորություն է ընձեռում ուսանողին կրթական ծրագրի ղեկավարի համաձայնությամբ դասընթացներ ընտրելու ինչպես բակալավրի հարակից կրթական ծրագրերի, այնպես էլ այլ բուհերի կողմից առաջարկվող դասընթացների ցանկից:

Կատարվել է կրթական ծրագրերի մոնիթորինգ, որի համար անցկացվել են 52 ֆոկուս-խմբային քննարկումներ: Հաշվետու ժամանակաշրջանում կրթական բոլոր ծրագրերը վերանայվել են, ապա համապատասխանեցվել նշված փաստաթղթերին՝ հիմք ընդունելով ուսանողակենտրոնության սկզբունքները, ինչպես նաև ուսանողական հարցումներն ու մշտադիտարկման արդյունքները:

Վերանայման արդյունքում նվազեցվել է ուսանողի շաբաթական բեռնվածությունը, բացի դրանից՝ նվազեցվել են ընդհանրական կոմպետենցիաները՝ հօգուտ մասնագիտական կոմպետենցիաների: Ուսումնական պլաններում ներառվել են «Քննադատական մտածողության» և «Մեդիագրագիտության» դասընթացները: Օտար լեզուների ուսուցման նպատակով կուրսերում խմբերը սկսել են ձևավորվել՝ ըստ ուսանողների՝ լեզվի իմացության մակարդակների: «Ֆիզիկական դաստիարակություն» դասընթացի շրջանակում էլ ձևավորվում են սեկցիոն խմբեր:

Կրթական ծրագրերում միջգիտակարգայնությունն ապահովելու համար ստեղծվել են մոդուլացված առարկաներ: Ներդրվել է «Մեթոդներ և պլանավորում» պարտադիր դասընթաց: Բացի դրանից՝ միջգիտակարգային հետազոտությունները խթանելու նպատակով իրականացվել են միջմասնագիտական մագիստրոսական թեզեր: Այն հարակից մասնագիտական ոլորտների կրթական ծրագրերում սովորող երկու ուսանողների կողմից երկու գիտական ղեկավարի ընդհանուր ղեկավարությամբ իրականացվող հետազոտական աշխատանք է: Նման աշխատանքների կատարման համար սահմանել ենք դրամաշնորհներ: 2022-23 ուստարում պատրաստվել է 7 միջմասնագիտական մագիստրոսական թեզ:

Հաշվետու ժամանակաշրջանում ներդրվել են կրթական նոր ծրագրեր, վերանայվել է մագիստրոսական որոշ ծրագրերի տևողությունը: 2022-2023 ուսումնական տարում լիցենզավորվել ու ներդրվել են «Կրոնական զբոսաշրջություն», «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա», «Հասարակայնության հետ կապեր», «Հանրային քաղաքականություն և հանրային կառավարում» բակալավրի և «Միջազգային դատարաններ և արբիտրաժ» ու «Հանրային քաղաքականության հետազոտություններ» մագիստրոսի կրթական ծրագրերը:

Միջազգային չափանիշներին համապատասխան որակյալ կրթություն տրամադրելու նպատակով մենք սկսել ենք կրթական ծրագրերի միջազգային

հավատարմագրման գործընթաց: Հաշվետու ժամանակաշրջանում Կենսաբանության ֆակուլտետի և Ֆարմացիայի ինստիտուտի կրթական երկուական ծրագրեր ներկայացվել են «ASIIN» միջազգային կազմակերպություն՝ հավատարմագրում ստանալու համար: Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել ու թարգմանվել են ինքնագնահատման զեկույցները:

Միջազգային հավատարմագրումը բարձրացնելու է համալսարանի, կրթական ստորաբաժանումների ու ծրագրերի վարկանիշը՝ դրանք դարձնելով առավել գրավիչ ոչ միայն հայ, այլև օտարերկրյա դիմորդների համար: Այն ընդլայնելու է նաև շրջանավարտների՝ աշխատանքի անցնելու հնարավորությունները, խթանելու է ուսանողների և դասախոսների միջազգային շարժունությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում Ռադիոֆիզիկայի ու Ֆիզիկայի ֆակուլտետների միավորման արդյունքում ստեղծվեց ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտը: Ֆակուլտետները միավորելու ու նոր ստորաբաժանում ստեղծելու որոշումը երկարատև քննարկումների ու բազմապիսի վերլուծությունների արդյունք էր: Երկու ֆակուլտետներում գործող կրթական ծրագրերի ուսումնասիրությունը ցույց էր տվել, որ դրանց միջև առկա են հստակ կապ ու համագործակցային լայն

հնարավորություններ, սակայն միասնական հարթակի բացակայության պատճառով դրանք բավարար կերպով չէին օգտագործվում:

Գործընթացի շրջանակում կրթական ծրագրերն ամբողջությամբ վերանայվում են՝ դրանք դարձնելով առավել արդիական, ճկուն և ներկայիս ու ապագա մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ լուծումներ առաջարկող:

Հաշվետու ժամանակաշրջանում «Էրազմուս+» ծրագրի շրջանակում իրագործվել են շարժունության բազմաթիվ ծրագրեր թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների ու հետազոտողների համար: 2022-2023 ուսումնական տարում իրականացվել է 680 գործուղում. գործուղվել են 282 մասնագետ, 165 ուսանող և 4 ասպիրանտ: ԵՊՀ վարչական կազմից արտասահման է գործուղվել 229 անձ: ԵՊՀ է այցելել 70 հրավիրյալ պրոֆեսոր:

Գործընկեր բուհերի հետ շարունակվել են բանակցություններ կրկնակի դիպլոմով կրթական ծրագրերի իրականացման ուղղությամբ, որոնք կարևոր են ինչպես կրթության որակի, այնպես էլ բուհի ճանաչելիության ու հեղինակության բարձրացման համար:

Հաշվետու ժամանակահատվածում վարած քաղաքականության արդյունքում ընդլայնվել է օտարերկրյա մեր ուսանողների աշխարհագրությունը: Անցած ուսումնական տարում ԵՊՀ-ում սովորել է 397 օտարերկրյա ուսանող:

Շարունակական բնույթ են կրում նաև օտարերկրյա ուսանողների համար կազմակերպվող դասընթացները, այդ թվում՝ պարսկերենի ու ռուսերենի ուսուցման նպատակով: ԵՊՀ-ում դասընթացների մասնակցել են Օքսֆորդի, Քեմբրիջի և Էդինբուրգի համալսարանների ուսանողներ: Առաջիկայում նախատեսված է կազմակերպել ամառային ու ձմեռային դպրոցներ գործընկեր բուհերի ուսանողների և հետաքրքրված այլ անձանց համար:

ԵՊՀ-ն առաջին անգամ հյուրընկալել է աշխարհի առաջատար ուսումնական հաստատություններից մեկի՝ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի (MIT) մագիստրատուրայի երեք ուսանողների, որոնք մեկ ամսվա ընթացքում ԵՊՀ բակալավրիատի ուսանողների համար վարել են տարբեր թեմաներով աշխատարաններ:

Հաշվետու տարում գործարկվել է պրակտիկաների կազմակերպման ու վերահսկման էլեկտրոնային նոր գործիք, որը նպաստում է հաշվետվողականությանը, թափանցիկությանը և արդյունավետությանը:

Ներդրվել է պրոֆեսորի օգնականի հաստիք, որն այս ժամանակահատվածում փորձարկվում է երկու ֆակուլտետներում:

ԵՊՀ գիտական խորհուրդը հաստատել է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման 2023-2026 թվականների ծրագրի իրականացման կարգը, որը մշակվել է՝ հաշվի առնելով ԵՊՀ 2021-26 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի առաջնահերթությունները, ինչպես նաև իրականացրած հետազոտությունների արդյունքներն ու հանդիպումների ընթացքում արձանագրված խնդիրներն ու առաջարկությունները:

Հաստատված նոր կարգի համաձայն՝ ԵՊՀ դասախոսների համար կազմակերպվելու են վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցությունը լինելու է կամավոր: Վերապատրաստման ծրագրով մենք նպատակ ունենք բարելավելու դասախոսների մասնագիտական գիտելիքները, արդիականացնելու նրանց դասավանդման կարողությունները, զարգացնելու հետազոտական աշխատանքներ կատարելու հմտությունները, ինչպես նաև նպաստելու ձևավորված ակադեմիական միջավայրի լավարկմանը:

Վերապատրաստման դասընթացներից հետո անցկացվելու է ամփոփիչ կամավոր ատեստավորում, որի ժամանակ հաշվի է առնվելու ոչ միայն դասընթացների մասնակցությունը, այլև դրանց արդյունքում ստացած գիտելիքների և

հմտությունների կիրառումը կրթական ծրագրերում: Ատեստավորումը հաջողությամբ անցած դասախոսների աշխատավարձը նախատեսվում է բարձրացնել մինչև 40 տոկոսով:

ԵՊՀ-ում հետազոտությունների խթանման և արդյունավետ դասավանդման համար որդեգրել ենք նոր մոտեցում՝ հնարավորություն տալով դասախոսին տարեկան 700 ժամ բեռնվածության 50 ժամը նախատեսել հետազոտական աշխատանքի համար: Որպես արդյունք յուրաքանչյուր դասախոս տարվա ավարտին պետք է ներկայացնի առնվազն մեկ գիտական հոդված:

Հետազոտական բուհ դառնալու մեր նպատակի իրագործմանը հասնելու, հետազոտական գործունեությունը դասավանդման անբաժանելի բաղադրիչ դարձնելու և նոր գիտելիքի ստեղծման հնարավորություններն ընդարձակելու նպատակով ներդրված այս մոտեցման համար մենք ուսումնասիրել ենք միջազգային փորձը, մշակել մեր ռազմավարությունը:

ԵՊՀ-ում դասավանդման մեթոդների կատարելագործումը խթանելու, արդի մեթոդների կիրառմանն ու լավագույն փորձի տարածմանը նպաստելու համար կազմակերպել ենք «Երևանի պետական համալսարանում դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթը:

Հաշվետու ժամանակաշրջանում լիցենզավորվել ու մեկնարկել է ՍԹԵՄ ուղղությամբ հանրակրթական ավագ դպրոցի գործունեությունը, որի ստեղծմամբ մենք նպատակ ունենք ԵՊՀ հետազոտահենք կրթության ավանդույթների ու

մշակույթի ներդրմամբ, ուսումնական որակյալ ծրագրի, ուսուցչական լավագույն համակազմի ու կրթությունն արդյունավետորեն կազմակերպելու համար անհրաժեշտ մյուս բոլոր պայմանների առկայության շնորհիվ ձևավորել այնպիսի միջավայր, որտեղ աշակերտները հնարավորություն կունենան բացահայտելու իրենց ողջ ներուժը, զարգացնելու հմտությունները և դառնալու պատասխանատու, ստեղծագործ ու ստեղծարար անհատներ և արժանապատիվ քաղաքացիներ: Այս պահին դպրոցում սովորում է 36 աշակերտ:

ԵՊՀ-ում բացվել և հաջողությամբ գործում է Ակադեմիական գրագրության կենտրոնը, որը ասպիրանտների և երիտասարդ հետազոտողների համար նախատեսված ու տեխնիկական նորագույն սարքավորումներով կահավորված միջավայր է: Կենտրոնը ոչ միայն հետազոտություն իրականացնելու հարմարավետ տարածք է, այլև երիտասարդ հետազոտողների շփման հարթակ, նոր կապեր հաստատելու և միջգիտակարգային հետազոտությունները խթանելու հնարավորություն: Հետազոտությունների ու հոդվածների որակը բարձրացնելու նպատակով կենտրոնի մասնագետները խորհրդատվական աջակցություն են տրամադրում ԵՊՀ մագիստրոսներին ու ասպիրանտներին:

Ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների համար ԵՊՀ-ում գործում են տարբեր հիմնադրամների, գործատուների և անհատների կողմից տրամադրվող անվանական կրթաթոշակներ, որոնց քանակը փոփոխվում է՝ ըստ

տարիների: 2022-23 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ԳԽ կողմից հաստատված 54 անվանական կրթաթոշակներից օգտվել է 57 ուսանող, իսկ 2-րդ կիսամյակում 56 անվանական կրթաթոշակներից օգտվել է 59 ուսանող:

Առաջին անգամ ԵՊՀ-ում մշակվել է օտարերկրյա ուսանողներին կրթաթոշակ տրամադրելու վերաբերյալ կարգ: Մենք արդեն հայտարարել ենք կրթաթոշակների տրամադրման մասին ու ստացել հայտեր, որոնք այժմ ուսումնասիրման փուլում են:

ԵՊՀ-ում կրթության ու հետազոտությունների որակը, ինչպես նաև հաղորդակցվելու և տեղեկություն ստանալու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ստեղծվել ու լավարկվել են համալսարանի էլեկտրոնային հարթակները՝ հնարավորություն տալով թվայնացնելու կրթական և հետազոտական գործընթացին վերաբերող տարբեր բաղադրիչներ:



Որդեգրելով ուսանողակենտրոն ուսուցման փիլիսոփայությունը՝ մենք նախաձեռնել ու ստեղծել ենք «Registrar» հարթակը: Այն հնարավորություն է ընձեռում ուսանողներին կրթական ծրագրի առաջարկած դասընթացների ցանկից ընտրելու առարկաները, դասախոսին և դասերի անցկացման ժամը, հետևելու առաջադիմությանն ու կազմելու իրենց ուսումնական հետագիծը:

Բացի դրանից՝ ուսանողները կարողանում են տեսնել, թե ինչ ճանապարհ պիտի անցնեն կրթական ծրագրի ավարտին հասնելու համար: Հարթակը նաև դասախոսների համար է՝ հնարավորություն տալով գրանցելու ուսանողների ներկայությունը, գնահատելու նրանց և այլն:

Շարունակվել են «Supervision» համակարգի թարմացումներն ու համապատասխանեցումը ուսումնական գործընթացին: Համակարգում ավելացել է կրթության երրորդ աստիճանի բաղադրիչը:

Հաշվետու ժամանակաշրջանը ուշագրավ ու նշանակալի էր նաև միջազգային օլիմպիադաներում ու մրցույթներում համալսարանականների գրանցած հաջողություններով ու նվաճումներով:

ԵՊՀ 7 ուսանողներ այս տարի արժանացել են ՏՏ բնագավառում կրթական մրցանակների: 2022 և 2023 թվականներին ՀՀ բուհերի լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթի արդյունքում ԵՊՀ 7-ական ուսանող ճանաչվել է հաղթող՝ զբաղեցնելով մրցանակային տարբեր տեղեր:

Ցյուրիխում անցկացված Քիմիայի միջազգային 55-րդ օլիմպիադայում Հայաստանի թիմը նվաճել է 1 ոսկե և 2 բրոնզե մեդալ: Օլիմպիադայում հաղթած

աշակերտներից երկուսն այս ուստարվանից կհամալրեն ԵՊՀ ուսանողների շարքերը: Թիմի նախապատրաստական աշխատանքները ղեկավարել ու օլիմպիադայում գրանցած հաղթանակի գործում մեծ ավանդ է ունեցել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ Արմեն Գալստյանը: Մաթեմատիկական միջազգային ուսանողական օլիմպիադայում (International Mathematics Competition) ԵՊՀ ուսանողներն արժանացել են մեկ ոսկե և երեք արծաթե մեդալների. թիմը ղեկավարել է ԵՊՀ «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» մագիստրոսական ծրագրի ղեկավար Կարեն Քեռյանը:

Ինդոնեզիայի Բանդունգ քաղաքում տեղի ունեցած Աշխարհագրության 19-րդ միջազգային օլիմպիադայում Հայաստանի թիմը նվաճել է բրոնզե մեդալ: Թիմը ղեկավարել է ԵՊՀ սերվիսի ամբիոնի դոցենտ Գոռ Ալեքսանյանը:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը ներկայացնող թիմը Նյուրնբերգյան ամենամյա հեղինակավոր դատախաղ-մրցույթում «Լավագույն գրավոր աշխատանք» անվանակարգում հաղթող է ճանաչվել, իսկ բանավոր փուլում՝ ընդգրկվել լավագույն տասնյակում:

Գիտություն

ԵՊՀ-ում իրականացվում են հետազոտություններ՝ հասարակագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար, բնագիտական ու մաթեմատիկական մասնագիտությունների լայն սպեկտրով: Այս ուղղությամբ իրականացված մեր ծրագրերը միտված են զարգացնելու նորարարական հետազոտությունները և խթանելու գիտական ձեռքբերումները:

Միջազգային վարկանիշային գիտական հանդեսներում հոդվածների հրապարակումը խթանելու, ինչպես նաև ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար ԵՊՀ-ում գործում են համապատասխան մեխանիզմներ, որոնք անընդհատ վերանայվում և բարելավվում են: Առաջիկայում նախատեսում ենք ևս մեկ անգամ ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը վերանայել, ինչի արդյունքում ԵՊՀ աշխատողներին գիտահետազոտական գործունեության միջազգային հրապարակումների համար նախատեսված վճարի չափը զգալիորեն կավելանա:

Հաշվետու ժամանակահատվածում տպագրվել են 1494 հոդվածներ, 16 մենագրություններ, 36 ուսումնական ձեռնարկներ ու 14 դասագրքեր: Ընդ որում՝ հոդվածներից 243-ը տպագրվել է ինդեքսավորվող «Scopus» շտեմարանում ընդգրկված միջազգային հեղինակավոր հանդեսներում: ԵՊՀ ԻՄ 66 հիմնական աշխատող դասախոսների կողմից հրատարակվել է 56 հոդված (նախորդ ուստարում՝ 42), այդ թվում՝ ազդեցության գործակցով ամսագրերում (JCR) տպագրված 2 հոդված և 4 ուսումնական ձեռնարկ:

ԵՊՀ-ում արդեն երկրորդ տարին սահմանվում են գիտական ներքին դրամաշնորհներ, որոնց տրամադրման առանցքային պայմաններն են հրավիրյալ պրոֆեսորի ներգրավումը ծրագրում, ազդեցության բարձր գործակցով ամսագրերում հոդվածների տպագրումը և այն, որ գիտական խմբի անդամներից առնվազն մեկը պետք է լինի ԵՊՀ ուսանող: Ամփոփելով նախագծի առաջին տարվա արդյունքները՝ գիտական խորհրդի որոշմամբ հաշվետու տարում գիտական 10 ծրագրի համար սահմանվել է ներքին դրամաշնորհ:

Սահմանվել են նաև գիտական գործուղումների նպատակով տրամադրվող դրամաշնորհներ: Ըստ կարգի՝ ճանապարհորդական դրամաշնորհին կարող են դիմել ԵՊՀ հիմնական աշխատակիցները կամ ասպիրանտները, որոնք իրենց գիտական աշխատանքներում ԵՊՀ-ն նշում են որպես աշխատավայր՝ ցանկություն

հայտնելով մասնակցելու միջազգային սեմինարների, գիտաժողովների կամ իրենց հետազոտական ոլորտին առնչվող այլ միջոցառումների:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված մրցույթների արդյունքներով ԵՊՀ գիտական խմբերի ու ասպիրանտների առաջարկած թեմաներ երաշխավորվել են ֆինանսավորման: Անցկացված մրցույթները նպատակ ունեն խթանելու գիտական և գիտատեխնիկական գործունեությունը, արդիականացնելու ենթակառուցվածքներն ու նյութատեխնիկական բազան, նպաստելու կիրառական արդյունքի ձեռքբերմանը, աջակցելու ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների իրականացմանը, գիտական խմբերի և լաբորատորիաների աշխատանքների ամրապնդմանը և այլն: Բուհերի մեջ երաշխավորված թեմաների քանակով ԵՊՀ-ն կրկին եղել է առաջատարը:

Հատկանշական է, որ արդյունավետ գործող գիտական խմբերում գրեթե միշտ ներառված են լինում համալսարանի ուսանողները, ինչը կարևոր նախապայման է գիտության զարգացման շարունակականությունը ապահովելու համար:

ԵՊՀ ամսագրերի թվայնացման, որակի ու միջազգային տեսանելիության բարձրացման ուղղությամբ իրականացվում են բարեփոխման բազմաթիվ աշխատանքներ: Համալսարանում հրատարակվող ավելի քան 20 ամսագիր իր

աշխատանքները շարունակել է ծավալել «OJS» (Open Journal System) ամսագրերի էլեկտրոնային կառավարման համակարգում:

Վերանայվել են ԵՊՀ հրատարակչական էթիկայի նորմերն ու քաղաքականությունը՝ համապատասխանեցնելով «COPE» (Committee of Publication Ethics) գիտահրատարակչական փոփոխված քաղաքականության նոր սկզբունքներին:

ԵՊՀ հրատարակչության աշխատանքների շրջանակում շարունակվում են համընկնումների և գրագողության բացահայտմանն ուղղված, գրքերի և գիտական ամսագրերում հոդվածների հետկանչի մեխանիզմների լավարկման աշխատանքները: Կիրառվում են հակապլագիատ համակարգեր:

Համալսարանական ամսագրերին որակական նոր մակարդակ հաղորդելու համար դրանց խմբագրակազմերում ներգրավվել են առաջատար մասնագետներ արտերկրի գիտակրթական կառույցներից: Խմբագրական խորհուրդներում նրանց թիվը կեսից ավելին է: ԵՊՀ ամսագրերը շարունակվում են ներառվել և ինդեքսավորվել միջազգային հեղինակավոր շտեմարաններում՝ «EBSCO», «DOAJ», «ERIHPlus», «Index Copernicus», «Liguilist», «elibrary», «Cyberleninca», «Miar», «ZbMath», «Mathnet.ru» և այլն: «Google Scholar» հարթակի տվյալների համաձայն՝ էականորեն աճել են ամսագրերին արվող հղումները: Երեք ամսագիր

«IndexCopernicus»-ում ստացել է թվային ինդեքս: Էականորեն ավելացել է նաև WoS/ Scopus շտեմարաններում ընդգրկված ամսագրերից համալսարանական ամսագրերին արվող հղումների քանակը: Համալսարանի 4 ամսագիր գրանցվել է «ERIHPlus» եվրոպական հումանիտար ամսագրերի հեղինակավոր շտեմարանում: Ներկայումս միջազգային շտեմարաններում գրանցված ամսագրերի քանակով ԵՊՀ-ն ինստիտուցիոնալ առումով առաջատար է:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ համայնքին հասանելի են դարձել միջազգային և ներբուհական այնպիսի թվային հարթակներ, ինչպիսիք են «Scopus», «Research4Life», «EBSCO», «MathSciNet» միջազգային բազաները, ինչպես նաև էլեկտրոնային հեղինակավոր այլ ռեսուրսներ: Ժամանակավոր հասանելիություն է ձեռքբերվել նաև «Brill», «JSTOR», «World Scientific» շտեմարաններին:

Շարունակվել են ԵՊՀ գրադարանի բարեփոխման աշխատանքները: Թարմացվել է գրադարանային ֆոնդը՝ համաձայն ֆակուլտետներից ներկայացված ցանկի: Մշակվել է գրադարանի բարեփոխման ռազմավարություն:

Մտքերի փոխանակման, հետազոտությունների արդյունքների ներկայացման, ինչպես նաև համագործակցային նոր կապերի հաստատման, իրականացվող ծրագրերի ընդլայնման ու նոր գաղափարների իրագործման տեսանկյունից

կարևոր է գիտաժողովների անցկացումը: Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ-ում կազմակերպվել է միջազգային ու հանրապետական 87 գիտաժողով:

Արդեն երկրորդ տարին անընդմեջ ԵՊՀ-ում կազմակերպվեց «AI Conf Armenia» կոնֆերանսը, որն այս տարի կրում էր «AI հեղափոխությունը և կարիերան» խորագիրը: Այն միտված էր համախմբելու ոլորտի ներկայացուցիչներին ու բոլոր հետաքրքրված անձանց և քննարկելու արհեստական բանականության ընձեռած հնարավորություններն ու զարգացման հեռանկարները:

Մեր երկրում գիտությունը նոր թափով զարգացնելու և երիտասարդներին ոգեշնչելու ուշագրավ միջոցառում էր «Սթարմուս» փառատոնը, որի շրջանակում կազմակերպվեց «ԵՊՀ-Սթարմուս Նոբելյան շաբաթ» խորագրով միջոցառումը: Մեկ շաբաթվա ընթացքում նոբելյան մրցանակակիրներ ու հռչակավոր այլ գիտնականներ այցելեցին ԵՊՀ ու հանդես եկան դասախոսություններով: Վստահաբար այն մեր համալսարանի պատմության բացառիկ միջոցառումներից էր, որը հնարավորություն ընձեռեց համալսարանականներին հանդիպելու լեգենդար գիտնականների հետ, ստանալու նոր գիտելիքներ, ինչպես նաև հարցեր ուղղելու նրանց:

ԵՊՀ-ն ներկայացուցչական տաղավարով մասնակցել է «ԴիջիԹեք-2022» ցուցահանդեսին՝ ներկայացնելով գրանցած վերջին հաջողություններն ու հնարավորությունները: Միջոցառումը համախմբել էր տեխնոլոգիական ոլորտի

շուրջ 120 ընկերությունների և նպատակ ուներ ցույց տալու Հայաստանի տեխնոլոգիական ոլորտի ձեռքբերումներն ու զարգացման ներուժը:

Հաշվետու ժամանակաշրջանում վերանորոգվել ու նորագույն սարքավորումներով վերազինվել են բազմաթիվ լաբորատորիաներ ու կենտրոններ: Ձևավորվել են գիտական նոր խմբեր: Ստեղծվել է ԵՊՀ վրացագիտության կենտրոնը:

Ֆիզիկայի և Ռադիոֆիզիկայի ֆակուլտետների միավորման արդյունքում ստեղծված Ֆիզիկայի ինստիտուտում գործում է գիտահետազոտական մեկ ինստիտուտ, որը ներառում է ստորաբաժանման բոլոր գիտահետազոտական միավորները:

Հաշվետու տարվա ձեռքբերումներից է «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակում ԵՊՀ-ի ներկայացրած ծրագրի հաջողությունը. այն շահել է դրամաշնորհային մրցույթում, որի արդյունքում ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտում ստեղծվում է Օպտիկական միկրոհամակարգերի մշակման և հետազոտման գիտակրթական կենտրոն, որն աննախադեպ հնարավորություններ է բացելու մեր երկրում բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման համար:

Գիտաուսումնական կենտրոնը, որի ստեղծման համար ներդրումներ ենք հատկացրել նաև ԵՊՀ բյուջեից, համալրված է լինելու ժամանակակից օպտիկական և օպտոէլեկտրոնային սարքերի միկրոմշակման, դրանց միջոցով կենսաօպտիկայի, տեղեկատվության մշակման ու հեռահաղորդակցության

ոլորտներում բարձր տեխնոլոգիական միկրոհամակարգերի պատրաստման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով և նպաստելու է կրթության որակի և հետազոտությունների արդյունավետության բարձրացմանը:

Համալսարանական միջավայր

Համալսարանի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում կազմվել, մշակվել, վերանայվել, խմբագրվել ու հաստատվել են մի շարք կանոնակարգեր, կանոնադրություններ ու կարգեր: Հաստատվել է ԵՊՀ նոր խմբագրությամբ կանոնադրությունը, որի արդյունքում տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ, որոնցից էր, օրինակ, կրթական ստորաբաժանումների ղեկավարների ընտրության ու հաշվետվության ձևաչափը:

Հաշվետու ժամանակահատվածում, նոր կարգի համաձայն, տեղի են ունեցել կրթական ստորաբաժանումների ղեկավարների ընտրություններ, կազմվել, մշակվել ու գործածվել է հաշվետվության միասնական ձևաչափը:

Այս ընթացքում ստեղծվել, տարանջատվել, միավորվել կամ միաձուլվել են մի շարք ստորաբաժանումներ: ԵՊՀ բարեփոխումների շրջանակում ստեղծվել են ֆակուլտետային գրասենյակներ: Իրականացրել ենք գործընթացի կարևոր

բաղադրիչ փուլը՝ ուսումնաօժանդակ համակազմի վերապատրաստումը, ինչից հետո անցկացրել ենք ատեստավորում. արդյունքում աշխատակիցների գործառույթների շրջանակը համակարգվել ու ընդլայնվել է, իսկ աշխատավարձը՝ զգալիորեն բարձրացվել:

Գործընթացի արդյունքում կատարվել են գործառույթների բովանդակային փոփոխություններ: Ըստ էության՝ գրասենյակների ստեղծմամբ մենք միավորել ենք ֆակուլտետների դեկանատների, ամբիոնների գործավարների գործառույթները՝ ավելացնելով նոր լիազորություններ ու պարտականություններ, որոնք նպաստելու են ինչպես ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ հաղորդակցության ամրապնդմանն ու միջավայրի լավարկմանը:

Ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ մենք իրականացնում ենք ծրագրեր, որոնց շնորհիվ համալսարանը կունենա առավել նպաստավոր պայմաններ ու ավելի գեղեցիկ միջավայր, որտեղ սովորելն ու ստեղծագործելն իրապես հաճելի են լինելու:

Կրթական միջավայրը բարելավելու և ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով վերանորոգվել ու վերազինվել են լսարաններ, ուսումնական լաբորատորիաներ:

Վերանորոգել ենք Քիմիայի ֆակուլտետի ու Ֆիզիկայի ինստիտուտի լաբորատորիաները, ձեռք ենք բերել ժամանակակից սարքավորումներ, որոնք նշանակալի առաջընթաց են նորարարական հետազոտությունները խթանելու և մեր ուսանողների համար ուսումնական ու հետազոտական ավելի լավ միջավայր ապահովելու գործում: Համագործակցության արդյունքում «Ֆիլիպ Մորիս Արմենիա» ընկերության կողմից վերանորոգվել է Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի մի հատվածը, իսկ «Ակբա» բանկի կողմից ձեռքբերված գույքի ու տեխնիկայի շնորհիվ այն դարձել է յուրատեսակ թվային կենտրոն:

Վերազինվել են համակարգչային լսարանները: Լսարաններում տեղադրվել են ավելի քան 100 «խելացի» գրատախտակներ: Գրադարանի բարեփոխումների շրջանակում վերանորոգվել են առանձին սրահներ: Ընթերցասրահները սկսել են աշխատել մինչև ժամը 21:00-ն: Պլանավորվում է բարելավել գրադարանի քարտային համակարգն ու մատուցվող ծառայությունները:

Դիզայներական լուծումներով վերանորոգվում են լսարաններ, ամբիոններ, լաբորատորիաներ, պահեստներ, վարչական գրասենյակներ, որոնք համալրվում են անհրաժեշտ գույքով ու ժամանակակից սարքավորումներով:

Ընթացքի մեջ են կենտրոնական մասնաշենքի առաջին հարկի, ինչպես նաև ընդհանուր տարածքի 30 սանհանգույցի վերանորոգման աշխատանքները:

Տեղադրվում են թեքահարթակներ՝ հենաշարժական խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժի համար՝ ապահովելով ներառական միջավայր, նախատեսվում է բարեկարգել ԵՊՀ բակային տարածքը:

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի գործընթացը լիարժեք ապահովելու համար ներկայում ԵՊՀ-ում իրականացվում է նաև ջրագծերի և կոյուղագծերի վերանորոգում՝ հնամաշ խողովակաշարը փոխարինելով նորով:

Վերանայվում է ԵՊՀ ամբողջ տարածքի անվտանգային համակարգը, նախատեսվում է հակահրդեհային նորարարական հատուկ համակարգի ներդրում, որը հնարավորություն կտա առանց մարդկային գործոնի մարելու հրդեհը:

Շուտով կավարտվեն ԵՊՀ մարզասրահի վերանորոգման աշխատանքները, և համալսարանը կունենա ժամանակակից սարքավորումներով հագեցած սպորտային համակարգ:

Կատարվել է Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայի բակի վերանորոգում, տարածքում տեղադրվել է ժայռամագլցման պատ, Բյուրականի բազայում կատարվել են առաջնային նորոգման աշխատանքներ:

ԵՊՀ-ում ուսումնական գործընթացի կազմակերպման, հաղորդակցվելու և տեղեկություն ստանալու արդյունավետությունը բարձրացնելու համար ստեղծվում

են էլեկտրոնային հարթակներ՝ հնարավորություն տալով թվայնացնելու տարբեր բաղադրիչներ:

Իրականացվող յուրաքանչյուր գործընթացի վերաբերյալ պատրաստվել են ուղեցույցներ, որոնք մանրամասնորեն բացատրում ու հստակեցնում են, թե քայլերի ինչ հաջորդականությամբ է պետք օգտվել ու արդյունավետորեն կիրառել ստեղծված էլեկտրոնային հարթակները: Դիմումների, զեկուցագրերի, տեղեկանքների և հրամանների շրջանառությունը թվայնացվել է «Mulberry», «Supervision», «Հայկական ծրագրեր» հարթակների միջոցով: Ավելացել են «e-request.ysu.am» հարթակի միջոցով տրամադրվող դիմումների տեսակների քանակը, ինչն էականորեն նվազեցնում է թղթաբանությունը աշխատակիցների և ուսանողների համար՝ հնարավորություն տալով խնայել ժամանակը:



Հաշվետու ժամանակահատվածում ստեղծվել է ԵՊՀ նոր կայքէջը, ինչի արդյունքում թվային աշխարհում ԵՊՀ-ն ներկայացել է նոր դեմքով, տեղեկատվություն տրամադրելու առավել հասանելի ու մատչելի հնարավորություններով: Իրականացվել են բրենդի ճանաչմանն ու տարածմանն ուղղված աշխատանքներ:

ԵՊՀ-ն որդեգրել է մարդակենտրոն գործունեության քաղաքականություն և իրականացրել սոցիալական բազմաբնույթ ծրագրեր ու միջոցառումներ:

Հաշվետու տարում ԵՊՀ հիմնական աշխատակիցների համար ձեռք է բերվել առողջության ապահովագրության փաթեթ, որն առաջարկում է լավագույն պայմանները՝ ներառելով բժշկական մի շարք ծառայությունների փոխհատուցում:

Սոցիալական պատասխանատվության շրջանակում ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվի «Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին հիմնական աշխատողներին վճարվել է տարեվերջյան դրամական պարգևատրում՝ նրանց հիմնական աշխատանքային պայմանագրով (անհատական իրավական ակտով) սահմանված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան մեկ դրույքը, իսկ ամառային արձակուրդից առաջ՝ հիմնական աշխատավարձի 50 %-ի չափով:

Լյուդվիգ Ղարիբջանյանի անվան ԵՊՀ պատմության թանգարանը դարձել է Թանգարանների միջազգային խորհրդի անդամ և արդյունքում ձեռք բերել ինստիտուցիոնալ անդամության քարտեր, որոնց շնորհիվ հնարավոր է անվճար այցելել աշխարհի լավագույն թանգարաններ: Կարճատև գործուղումների ժամանակ ԵՊՀ աշխատակիցները կարող են իրենց հետ վերցնել քարտերը, ապա վերադարձնել թանգարանին: Ի դեպ, ԵՊՀ-ն հայաստանյան միակ կրթական հաստատությունն է, որն անդամակցում է խորհրդին:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են բազմաթիվ ակադեմիական, մշակութային ու մարզական միջոցառումներ:

Մայիսի 16-ին տեղի ունեցավ «ԲանՈՒԳործ. ԵՊՀ էքսպո-2023»-ը՝ նվիրված Երևանի պետական համալսարանի ծննդյան 104-ամյակին: Լայնամասշտաբ միջոցառման հիմնական նպատակն էր ներկայացնել կրթական և

աշխատանքային հնարավորությունները, ապահովել արդյունավետ հաղորդակցություն գործատուների, շրջանավարտների և ուսանողների միջև, ինչպես նաև համապարփակ թեմատիկ քննարկումների միջոցով վերհանել կրթական համակարգի ու գործատուների հետ առկա համագործակցության առանձնահատկությունները, խնդիրներն ու զարգացման հեռանկարները:

Էքսպոն անցկացվել է ԵՊՀ ամբողջ տարածքում. համալսարանի ֆակուլտետներն ու ինստիտուտները ներկայացրել են իրենց կրթական ծրագրերը, իսկ գործընկերները՝ աշխատանքի առաջարկներ, ինչպես նաև ընդունել մասնակիցների ինքնակենսագրականները:

ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում մեծ հանդիսավորությամբ տեղի ունեցավ ԵՊՀ շրջանավարտների ավարտական միջոցառումը, որի հիմնական բանախոսն այս տարի Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչ, ԵՊՀ դասախոս, հոգաբարձուների խորհրդի անդամ Եղիշե Կիրակոսյանն էր, որի նախաձեռնությամբ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում այս ուսումնական տարվանից մեկնարկել ու հաջողությամբ գործում է «Միջազգային դատարաններ և արբիտրաժ» մագիստրոսական կրթական ծրագիրը:

Համագործակցություն

ԵՊՀ-ում հետազոտահենք կրթության ու գիտության զարգացման համար համալսարանն ակտիվորեն համագործակցում է գիտահետազոտական ինստիտուտների, միջազգային գործընկերների, ինչպես նաև գիտական ու հետազոտական կիրառական արդյունքի անմիջական սպառողների՝ մասնավոր և պետական ոլորտների գործընկերների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են միջազգային գործընկերների հետ համագործակցության նոր պայմանագրերի կնքման կամ վերակնքմանն ուղղված աշխատանքները՝ որդեգրելով այն մոտեցումը, որ դրանցով պետք է իրագործվեն կոնկրետ ծրագրեր: Այս ընթացքում կնքվել ու վերակնքվել են 22 միջազգային պայմանագրեր: ԵՊՀ-ն այժմ համագործակցում է 49 պետությունների 249 գիտահետազոտական կառույցների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Էրազմուս+» բուհերի կարողությունների զարգացման ծրագրերում ունեցել ենք աննախադեպ քանակով մասնակցություն: Ամփոփված տվյալների համաձայն՝ ԵՊՀ-ն ներգրավված է 5 նախագծերի աշխատանքներում, որոնցից մեկի՝ «KPI4HE»-ի դեպքում հանդիսանում է ծրագրի համակարգող:

Մենք մեծապես կարևորում ենք պետական գերատեսչությունների ու գործարար աշխարհի մասնակցությունը կրթության կազմակերպման գործում, ինչն անհրաժեշտ է ինչպես աշխատաշուկայի պահանջները հստակ ձևակերպելու, այնպես էլ նոր խնդիրներ առաջադրելու տեսանկյունից: Այդ նպատակով կնքվել են համագործակցության մի շարք հուշագրեր:

ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի հետ ստորագրել ենք երկու կառույցների միջև համագործակցության հուշագիր՝ համատեղ նպաստելու կրթական համակարգի զարգացմանը:

Երկկողմ համագործակցության արդյունքում ստեղծելու ենք նոր հնարավորություններ՝ ամրապնդելու և խորացնելու մեր ուսանողների տեսական ու գործնական գիտելիքները: Համագործակցությունը նպաստելու է բուհ-աշխատաշուկա կապերի ամրապնդմանն ու կատարելագործմանը, ինչպես նաև գիտական մտքի և դրա արդյունքների դերի բարձրացմանը պետական ֆինանսական համակարգում ու հարկաբյուջետային քաղաքականության իրականացման գործընթացում:

Հուշագիր ենք ստորագրել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանի հետ՝ հաստատելու և զարգացնելու

գիտակրթական փոխգործակցություն, որով կնպաստենք էներգետիկ ոլորտի մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը:

Մեր երկրի տնտեսական և սոցիալական զարգացման գործում ատոմային էներգետիկայի դերն անչափ կարևոր է, իսկ ոլորտի որակյալ կադրերի առկայությունը՝ անհրաժեշտություն՝ հաշվի առնելով նաև անվտանգության բաղադրիչն ու մի շարք այլ առանձնահատկություններ:

Համագործակցության շրջանակում ստեղծելու ենք բոլոր պայմանները ՀԱԷԿ-ի պահանջներին բավարարող արհեստավարժ մասնագետների պատրաստման, ՀԱԷԿ-ի աշխատակիցների որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների իրականացման, գիտական համատեղ միջոցառումների ու հետազոտությունների անցկացման համար: Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի ուսանողների և ՍԹԵՄ դպրոցի աշակերտների համար կազմակերպել ենք ճանաչողական այցելություններ ատոմակայան:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի գլխավորած պատվիրակության կազմում Վրաստան պաշտոնական այցի շրջանակում Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանի ռեկտոր Ջաբա Սամուշայի հետ ստորագրել ենք փոխըմբռնման հուշագիր՝ ընդլայնելու երկու բուհերի միջև հաստատված փոխգործակցությունն ու ապահովելու դրա զարգացման շարունակականությունը:

Կարևորելով բուհ-աշխատաշուկա համագործակցության ընդլայնման անհրաժեշտությունը, տնտեսական մրցակցության պաշտպանության կարգավորումների արդյունավետության բարձրացումն ու բարձրագույն որակավորմամբ մասնագետների պատրաստումը՝ եռակողմ համագործակցության հուշագիր է ստորագրվել ԵՊՀ-ի, տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ու Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի միջև:

Հաշվետու ժամանակահատվածում Մոսկվայում տեղի ունեցած Եվրասիական տնտեսական համաժողովը համընկնում էր Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի հետ և նպատակ ուներ բարելավելու համագործակցային կապերը ԵՏՄ տարածքում: Համաժողովի շրջանակում ԵՊՀ-ի, ՌԴ ԱԳՆ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի, Բելառուսի պետական, Բելառուսի պետական տնտեսագիտական համալսարանների և Ղրղզստանի ԱԳՆ դիվանագիտական ակադեմիայի միջև

ստորագրվել է Եվրասիական ինտեգրման ոլորտում համատեղ գործունեության համաձայնագիր՝ ձևավորելու կոնսորցիում ու միավորելու ջանքերն ու միջոցները բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման համար:

ԵՊՀ-ում տեղի ունեցած «Գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը՝ տնտեսության արդիականացման շարժիչ ուժ» հայ-ռուսական գիտակրթական համաժողովի շրջանակում Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի ռեկտոր Վիկտոր Սադովնիչիի հետ երկու բուհերի միջև գիտական ու կրթական համագործակցության շրջանակում ստորագրել ենք փոխըմբռնման հուշագիր՝ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում ամրապնդելու փոխգործակցությունն ու բարեկամական կապերը:

ԵՊՀ-ն իրականացնում է մի շարք ծրագրեր, որոնց նպատակն է համակարգել, ակտիվացնել և հզորացնել համալսարանական շրջանավարտների համայնքը՝ ստեղծելով զարգացման և հաղորդակցության հավելյալ հնարավորություններ և՛ շրջանավարտների, և՛ համալսարանի համար:

Մենք ստեղծել ենք շրջանավարտների համապարփակ ու պարբերաբար թարմացվող տվյալների բազա, որի շնորհիվ համայնքի հնարավորինս լայն շրջանակի համար հասանելի կլինեն համալսարանական նորություններն ու իրադարձությունները: Որպես շրջանավարտների համայնքի հաղորդակցական

կարևոր գործիք՝ մշակվել է ԵՊՀ շրջանավարտների տեղեկագիրը, որի միջոցով համայնքի անդամները հնարավորություն ունեն ստանալու համալսարանին, ԵՊՀ շրջանավարտներին և հայաստանյան գիտակրթական ոլորտին վերաբերող նորություններ, հարցազրույցներ, հայտարարություններ և կարևոր այլ տեղեկություններ:

Նախատեսվում է կազմակերպել շրջանավարտների ամենամյա ֆորում, որը մի հարկի տակ կհավաքի ԵՊՀ տարբեր տարիների շրջանավարտներին և հնարավորություն կտա նրանց ներկայացնելու իրենց գիտելիքն ու փորձառությունը, կիսելու իրենց գաղափարներն ու նոր մոտեցումները ինչպես համալսարանական համայնքի, այնպես էլ հանրային ու փորձագիտական առավել լայն շրջանակների հետ:

Այժմ ակտիվ աշխատանքներ են տարվում ԵՊՀ շրջանավարտների ցանցի ձևավորման ուղղությամբ: Ակնկալվում է, որ ցանցը կունենա մասնագիտական և տարածաշրջանային միավորներ, գործադիր կոմիտե և քարտուղարություն: Վերջինս կհամարվի ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանում և կապահովի ցանցի գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական պայմանները:

ԵՊՀ-ում պարբերաբար տեղի են ունենում «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագրի քննարկում և անհրաժեշտ աշխատանքների հստակեցում:

Հաշվետվության մեջ տեղ է գտել համալսարանում կատարված աշխատանքների հիմնական մասը, որը հնարավորություն է տալիս ընդհանուր պատկերացում կազմելու ԵՊՀ-ում տեղի ունեցող գործընթացների տրամաբանության և հիմնական ուղղությունների մասին:

Բաժին երկրորդ.

2022-2023 ուսումնական տարվա գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները

Բաժին երկրորդ. ԵՊՀ ռազմավարական ծրագրի 2022-2023 ուսումնական տարվա կատարողական

Ռազմավարական նպատակ 1. Բարձրորակ կրթություն

Խնդիր 1. Ընդունելություն. ներգրավել բարձր ներուժ ունեցող դիմորդների՝ ապահովելով ներառականության սկզբունքը:

2022-2023 ուսումնական տարում ԵՊՀ-ն սահմանել է 2916 պլանային տեղ: Ընդունվել է 2354 դիմորդ (նախորդ ուսումնական տարվա համեմատ՝ 261-ով պակաս): Բարձր ներուժ ունեցող դիմորդներին ներգրավելու նպատակով անցկացվում են տարեկան օլիմպիադա և առարկայական մրցույթներ: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է օլիմպիադա՝ 15 առարկայից, որին, ընդհանուր առմամբ, մասնակցել է 1782 աշակերտ: Բացի դրանից՝ կազմակերպվել է առարկայական 3 մրցույթ՝ ընդհանուր 23 մասնակիցներով: Արդյունքում 76 դիմորդ ստացել է արտոնություն՝ ուսման վարձի զեղչի տեսքով (20 հոգի՝ 50 %, 24 հոգի՝ 40 %, 32 հոգի՝ 30 %):

Բարձր ներուժ ունեցող դիմորդներին ներգրավելու մեկ այլ միջոց է կրթաթոշակների տրամադրումը: 2022-2023 ուսումնական տարվա առաջին

կիսամյակում անվանական կրթաթոշակ է տրամադրվել 57, երկրորդ կիսամյակում՝ 59 ուսանողի: Այսպիսով, ռազմավարությամբ սահմանված՝ տարեկան առնվազն 5 կրթաթոշակների տրամադրման շեմը գերազանցված է:

Միևնույն ժամանակ, մշտական աշխատանքներ են տարվում դիմորդների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ՝ այցելություններ դպրոցներ, էքսպոներ, աշակերտների այցելությունների կազմակերպում ԵՊՀ և այլն:

Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների ներգրավվածությունն ապահովելու նպատակով աշխատանքներ են կատարվել ԵՊՀ ենթակառուցվածքային բարելավումների ուղղությամբ: Մասնավորապես՝ մեկնարկել են Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի մասնաշենքում մի քանի հարկերի վերանորոգման աշխատանքները «PMI Science» կազմակերպության աջակցությամբ, որի նախագծման աշխատանքների շրջանակում հաշվի են առնվել նաև միջավայրի ներառականության սկզբունքները:

Ֆիզիկական ենթակառուցվածքներին զուգահեռ՝ պակաս կարևոր չէ համապատասխան ուսումնական բովանդակության առկայությունը: Այս պահին մի շարք ուսումնական ստորաբաժանումներ ունեն հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին հարմարեցված դասընթացներ, դասախոսություններ, ուսումնական նյութեր, որոնց քանակի ավելացման համատեքստում պլանավորվում է մշակել ու

ներդնել հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար նախատեսված լրացուցիչ ուսումնական նյութեր, ինչպես նաև մշակել հեռաուսուցման օրինակելի փաթեթ, ինչը հնարավորություն կտա ապահովելու պատշաճ կրթական ծառայությունների որակ բոլոր ուսանողների համար:

Խնդիր 2. Մրցունակ կրթական ծրագրեր. տրամադրել բարձրակարգ ակադեմիական գիտելիք և փորձառություն յուրաքանչյուր ուսանողի՝ երաշխավորելով ընդհանրական և մասնագիտական կարողություններ և ապահովելով կրթության շարունակականություն:

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում կրթական ծրագրերի վերջնարդյունքների բարելավման նպատակով վերանայվել են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Սահմանված նոր ղեկավար ձեռնարկներին համապատասխան կրթական ծրագրերի վերանայման շնորհիվ ապահովվել է նաև բակալավրի կրթական ծրագրերում, այսպես կոչված, «4C» (քննական մտածողություն, համագործակցություն, հաղորդակցականություն, ստեղծարարություն) կարողությունների ձևավորմանը միտված բովանդակությունը:

Ուսանողների միջգիտակարգային գիտելիքների և կարողությունների զարգացման նպատակով շարունակաբար խրախուսվել է միջգիտակարգային մագիստրոսական թեզերի պատրաստումը: 2022-2023 ուստարվա ընթացքում գրվել են միջգիտակարգային 7 մագիստրոսական թեզեր, ինչը գերազանցում է ռազմավարությամբ սահմանված թիվը:

Այս խնդրի համատեքստում նաև որոշակի քայլեր են կատարվել կրթական ծրագրերի հիմնական շահակիցների կարիքների գնահատման մեթոդաբանության ձևավորման ուղղությամբ: Մասնավորապես, մշակվել է դեռ 2002 թ. իրականացվող ուսանողական հարցումների նոր կարգի նախագիծը, որը հաստատման փուլում է: Նոր կարգավորման շրջանակում նախատեսվել են հարցման անցկացման սկզբունքները, ժամանակահատվածը և դասընթացի ու դասախոսի գնահատման հարցաշարերի բովանդակության փոփոխություն, ինչը հնարավորություն է տալիս դասընթացի արդյունավետության, որակի և դասավանդման մեթոդաբանության վերաբերյալ ապահովելու հնարավորինս օբյեկտիվ ու արժանահավատ տեղեկությունների հավաքագրում: 2008 թ. անցկացվում են նաև շրջանավարտների՝ կրթական ծրագրերից բավարարվածության հարցումները, որոնց միջոցով ապահովվում է շրջանավարտների հետ հետադարձ կապը:



2022-2023 ուսումնական տարում ուժի մեջ է մտել նաև Ուսումնական գործընթացի կազմակերպման նոր կարգը, որով սահմանվում է ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման նորացված մեթոդաբանություն:

Բակալավրի 13 կրթական ծրագրերում ներմուծվել է նաև լրացուցիչ մասնագիտացման հնարավորություն: Սա փորձնական կարգով իրականացվել է բակալավրի 11 ծրագրերի համար: Եվս 2 կրթական ծրագրում այն գործարկելու հնարավորություն կլինի 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում:

Ուսանողների շարժունությունը խթանելու և ԵՊՀ միջազգայնացման մակարդակի բարձրացման նպատակով կրթական ծրագրերում արդեն իսկ նախատեսվել են նաև «շարժունության պատուհաններ», որոնք ևս ուժի մեջ կմտնեն 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում:

Մրցունակ կրթական ծրագրերի ապահովման տեսանկյունից շատ կարևոր է նաև ԵՊՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման նոր կարգի գործարկումը: Վերջինս հնարավորություն է տալիս գնահատելու ներբուհական կրթական գործընթացների որակը և վեր հանելու բարելավման հնարավորությունները: Սահմանված նոր կարգի համաձայն՝ իրականացվել է բակալավրի 52 կրթական ծրագրերի մշտադիտարկում: 2023 թ. դեկտեմբերի 15-ին վերջնականացվել են ֆակուլտետային մշտադիտարկման զեկույցները: Նախապես սահմանված ժամանակացույցի համապատասխան՝ ԵՊՀ կրթական

ծրագրերի մշտադիտարկման համապարփակ զեկույցը պատրաստ կլինի 2024 թ. ապրիլին:

Խնդիր 3. Կրթական միջավայր. յուրաքանչյուր ուսանողի համար ապահովել զարգացմանը միտված ֆիզիկական և վիրտուալ միջավայր:

Հաշվետու ժամանակահատվածում էապես բարելավվել են ԵՊՀ ֆիզիկական ենթակառուցվածքները: Վերանորոգվել ու կահավորվել են մի շարք լսարաններ և լաբորատորիաներ Կենսաբանության, Պատմության, Իրավագիտության, Փիլիսոփայության և հոգեբանության, Ժուռնալիստիկայի ֆակուլտետներում, բարեկարգվել են ԵՊՀ տարբեր մասնաշենքերի միջանցքները, աստիճանավանդակներն ու սանիտարական ենթակառուցվածքները, վերանորոգվել ու կահավորվել են մի շարք վարչական ստորաբաժանումների աշխատասենյակներ, «Իզմիրլյան» հիմնադրամի աջակցությամբ վերանորոգվել և կահավորվել են ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի 4-րդ հարկի ընթերցասրահները, կատարվել է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի արտաքին լուսավորման աշխատանքներ:

Ընդհանուր առմամբ, վերանորոգվել և կահավորվել են 18 աշխատասենյակներ, 27 լսարաններ և 3 լաբորատորիաներ:

Էական արդյունքներ են արձանագրվել ռազմավարությամբ սահմանված «Թվային կամպուսի» ստեղծման ուղղությամբ: Անցում է կատարվել «Google» հարթակին, ինչն էապես բարելավել է ներքին հաղորդակցությունը: Սա համալսարանականներին հնարավորություն է տալիս կիրառելու ինչպես էլեկտրոնային փոստը, այնպես էլ հարթակի մյուս գործիքները:

«Registrar» համակարգը գործարկվել է բոլոր ուսումնական ստորաբաժանումներում: Այս գործիքի կիրառումը հնարավորություն է տվել բարձրացնելու մի շարք կրթական գործընթացների արդյունավետությունը, ինչպիսիք են, օրինակ, դասընթացների ընտրությունը, քննությունների գնահատականների հավաքագրումն ու ամփոփումը և այլն:

Շարունակվել են «Supervision» համակարգի թարմացումներն ու առավել մեծ ծավալով համապատասխանեցումը ուսումնական գործընթացին, օրինակ, ավելացել է կրթության երրորդ աստիճանի բաղադրիչը (այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են):

Ընդլայնվել է «E-request» հարթակի գործիքակազմը, ավելացվել է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումների թիվը, այժմ առկա է ուսանողի 4, աշխատակցի 12 դիմումի տեսակ: Ընդհանուր առմամբ, այս համակարգի միջոցով 2023 թ. ապրիլ-նոյեմբեր ժամանակահատվածում ստացվել է 1116 դիմում:



Խելացի գրատախտակներով են համալրվել ուսումնական ստորաբաժանումների լսարանները և գրադարանի ընթերցասրահները:

Մշակվել և գործարկվել է ուսումնական պրակտիկաների կազմակերպման էլեկտրոնային գործիք «Moodle» ուսուցման կառավարման հարթակում, ինչը էապես բարելավել է այս գործընթացի կազմակերպումը: Գործիքի կիրառումը հնարավորություն է տալիս արդյունավետ համակարգելու ուսանողի, պրակտիկայի ղեկավարի և ընդունող կողմի համատեղ աշխատանքը:

Նոր էլեկտրոնային հարթակների ներդրման սահունությունը և կիրառման արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են ԵՊՀ աշխատակազմի վերապատրաստումներ, ներառյալ՝ «Mulberry», «Supervision», «Moodle», «Registrar» համակարգերի, ԵՊՀ նոր կայքէջի վերաբերյալ:

Շարունակվել են աշխատանքները թվային գրադարանի զարգացման ուղղությամբ: Թվային գրադարանն այս պահին ներառում է շուրջ 3858 գիրք (նախորդ ուսումնական տարվա համեմատ՝ 430-ով ավելի):

Խնդիր 4. Բարձրորակ մարդկային ռեսուրսներ. ապահովել մասնագիտական համայնքի կարողությունների զարգացումը:

ԵՊՀ առաջնահերթությունների շարքում խիստ կարևորվում է նաև մասնագիտական համայնքի կարողությունների զարգացումը՝ մրցունակ կադրեր ունենալու նպատակով: Այս առումով հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ համայնքին հասանելի են դարձել միջազգային և ներբուհական այնպիսի թվային հարթակներ, ինչպիսիք են «Scopus», «Research4Life», «EBSCO», «MathSciNet» միջազգային բազաները, «ACM Digital Library», «e-Duke Journals Scholarly Collection», «Edward Elgar Publishing Development Studies & Environment e-books», «Edward Elgar Publishing Journals», «European Respiratory Journal», «IMechE Journals», «IWA Publishing Journals», «Mathematical Sciences Publishers Journals», «OpenEdition Journals», «Royal Society Journals Collection», «SAGE Premier», «Development», «Journal of Cell Science», «Journal of Experimental Biology» էլեկտրոնային ռեսուրսները: Ժամանակավոր փորձնական հասանելիություն է տրվել նաև «Brill», «JSTOR», «World Scientific» շտեմարաններին:

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում կատարվել է նաև ուսումնաօժանդակ համակազմի կարիքների գնահատում, որի հիման վրա անցկացվել են վերապատրաստումներ: Ընդհանուր առմամբ անցկացվել է 72 վերապատրաստում՝ 20 տարբեր թեմաներով, որն ընդգրկել է նոր ձևավորված ֆակուլտետային գրասենյակների ողջ գործունեության շրջանակը:

Վերապատրաստումներին մասնակցել է 179 աշխատակից: Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և հաստատվել է ուսումնաօժանդակ համակազմի ատեստավորման կարգը, որի հիման վրա էլ իրականացվել է ուսումնաօժանդակ համակազմում զբաղեցրած պաշտոնին աշխատակցի համապատասխանության ատեստավորումը և վերջնականացվել է ֆակուլտետային գրասենյակների կազմավորման գործընթացը:

Մշակվել և հաստատվել է նաև պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման նոր ծրագիրը, որում ներառվել են 5 բաղադրիչներ՝ հետազոտական, մասնագիտական/գիտակարգային, դասավանդման, հաղորդակցվելու և ընդհանրական կարողունակությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ: Ծրագիրը գնահատվում է երկու՝ վերապատրաստման և կիրառման փուլերով: Նոր ծրագրի կարևորագույն առավելություններից մեկն այն է, որ յուրաքանչյուր դասախոս ինքնագնահատման հարցաշարի արդյունքում նույնականացնում է իր ուժեղ և թույլ կողմերը, ստանում է համապատասխան խորհրդատվություն և սահմանված բաղադրիչներով առաջարկվող տարբեր թեմաներով տարատեսակ վերապատրաստումներից ձևավորում է իր անհատական փաթեթն ու ժամանակացույցը՝ հիմնվելով սեփական կարիքների ու առաջնահերթությունների վրա: Այս պահին վերջնականացվում է նաև դասախոսների ատեստավորման ընթացակարգը, որի համար հիմք է ծառայելու վերևում նկարագրված վերապատրաստման ծրագիրը:



Հաշվետու տարում ԵՊՀ-ում շարունակել է գործել դասախոսներին և ուսանողներին տրամադրվող հոգեբանական խորհրդատվության ծառայությունը,

որից օգտվել են 64 ուսանողներ, իսկ խորհրդատվության կազմակերպման գործընթացին մասնակցել է Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 15 ուսանող:

ԵՊՀ ռազմավարությամբ սահմանված առաջնահերթություններից է նաև աշխատակիցների մասնագիտական աճի խրախուսման ձևերի բազմազանեցումը: Այս նպատակով հաշվետու տարում կիրարկվել է ճանապարհորդական դրամաշնորհների տրամադրման նոր մեխանիզմ, որի շրջանակում արտերկրում գիտական միջոցառումների (գիտաժողովներ, սիմպոզիումներ, ամառային դպրոցներ, սեմինարներ) մասնակցելու համար ֆինանսական աջակցություն ստանալու համար ստացվել է 28 դիմում, որից 27-ը բավարարվել է:

Խնդիր 5. Միջազգայնացում և համագործակցություն. բարելավել համալսարանի միջազգայնացման ցուցանիշները կրթական և հետազոտական ոլորտներում:

ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով այս ուղղության համար սահմանված հիմնական առաջնահերթությունները կրկնակի և համատեղ դիպլոմով կրթական ծրագրերի, օտարալեզու կրթական ծրագրերի և ՄԿԾ-ներում օտարալեզու դասընթացների մշակումն ու ներդնում է:

Հաշվետու ժամանակահատվածում կրկնակի և համատեղ դիպլոմով նոր ԿԾ-ներ չեն գործարկվել, սակայն շարունակվել են աշխատանքները այդպիսի ծրագրերի իրականացման ուղղությամբ: 2023 թ. սեպտեմբերից Իրավագիտության ֆակուլտետում գործում է «Միջազգային դատարաններ և արբիտրաժ» մագիստրոսական կրթական ծրագիրը, որի դասընթացներն անցկացվում են անգլերենով: Մագիստրատուրայի 60 և 90 կրեդիտ աշխատածավալ ունեցող բոլոր կրթական ծրագրերում հաշվետու ուսումնական տարում ուսանողներին հնարավորություն է տրվել ընտրելու կա՛մ օտար լեզվով մասնագիտական դասընթաց, կա՛մ մասնագիտական օտար լեզու առարկա: Մինչ այս պահը հավաքագրված տվյալները փաստում են, որ ուսանողների հիմնական մասը նախընտրում է առաջին տարբերակը: Այժմ իրականացվում է գործընթացի մշտադիտարկում և գնահատում, որի արդյունքները հասանելի կլինեն հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում:

Միևնույն ժամանակ ռազմավարությամբ որպես առաջնահերթություններ սահմանված են նաև ուսանողների շարժունությունը, օտարերկրյա ուսանողների և հրավիրյալ պրոֆեսորների ներգրավումը կրթական ծրագրում:

Այս համատեքստում 2022-2023 ուսումնական տարում միջազգային ակադեմիական շարժունության ծրագրերից օգտվել է 65 ուսանող, ԵՊՀ է այցելել 70 հրավիրյալ պրոֆեսոր: Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ-ում սովորել է 397 օտարերկրյա ուսանող: Դրամաշնորհային ծրագրեր գրելու և ղեկավարելու

թեմայով անցկացվել է 1 վերապատրաստում, որն ունեցել է 36 մասնակից, առաջիկայում նախատեսվում է կազմակերպել ևս 1-ը:

Խնդիր 6. Արդյունավետ կառավարում. բարձրացնել համալսարանի կառավարման արդյունավետությունը կրթական ոլորտում

Համալսարանի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում ձևավորվել են աշխատակիցների ինքնագնահատման և ղեկավարի կողմից գնահատման մեխանիզմները, որոնք կգործադրվեն 2024 թ. հունվարից: Սա հետադարձ կապի ապահովման և պարբերական ու համակարգման գնահատման հավելյալ հնարավորություններ կստեղծի համալսարանի ողջ աշխատակազմի համար:

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում մեկնարկել է ինչպես ուսումնական, այնպես էլ վարչական ստորաբաժանումների գործողությունների պլանավորման գործընթացը: Պլանավորումն իրականացվել է երկու փուլով: Փորձնական շրջանը, որն ընդգրկել է 2023 թ. հունվար-օգոստոս ժամանակահատվածը՝ հնարավորություն տալով ստորաբաժանումներին ծանոթանալու պլանավորման ձևաչափին, գործընթացի առանձնահատկություններին և որոշակի փորձառություն ձեռք բերել: Պլանավորման հաջորդ՝ գործող շրջափուլն արդեն ներառել է 2023 սեպտեմբեր-2024 թ. դեկտեմբեր ժամանակահատվածում իրականացվելիք գործողությունները: Դրանք ներկայացվել են երկու խմբով՝ 2023 սեպտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատված՝ որպես արդեն իսկ մշակվածի շարունակություն, և 2024 հունվար-դեկտեմբեր ժամանակահատված, որը՝ որպես մեկ ամբողջական օրացուցային տարվա պլան, օգտագործվել է ԵՊՀ 2024 թ. եկամուտների և ծախսերի մասին նախահաշվի կազմման ընթացքում:

Այս գործընթացի շրջանակում գործադրվել է նաև ստորաբաժանումների գործունեության մշտադիտարկման մեխանիզմը, ինչը ենթադրում է եռամսյակային մշտադիտարկում և հաշվետու ժամանակահատվածի համար սահմանված ձևաչափով ու համապատասխան ստուգման միջոցներով հաշվետվության ներկայացում: Պլանավորման և մշտադիտարկման գործընթացների փորձարկումը հաշվետու ժամանակահատվածում հնարավորություն է տալիս քաղված դասերի և գործընթացի վերլուծության հիման վրա նախաձեռնելու նոր կարգի մշակումը:

Հաշվետու ժամանակահատվածում դասախոսական համակազմի կառավարման թվային հարթակի ստեղծման ուղղությամբ իրականացվել են մի շարք գործողություններ, մասնավորապես գործադրվել կամ բարելավվել են մի շարք էլեկտրոնային գործիքներ, այդ թվում՝ «Registrar» (Ռեգիստրար) համակարգը: Բարելավվել է արդեն իսկ գործող «Intranet» համակարգը, ապահովվել է ԵՊՀ կայքէջից «Intranet» համակարգ տեղեկության փոխանցման համաժամանակեցումն ու ներդաշնակեցումը: Այս ամենը հիմք է ծառայելու աշխատանքների համակարգման միասնական ու կենտրոնացված արդյունավետ թվային հարթակ ձևավորելու և գործարկելու համար:



ԵՊՀ-ում ներդրվել է նաև գրագողության դեմ պայքարի 2 նոր գործիք՝ անգլերեն և ռուսերեն բազաներով: Համալսարանի ներքին կարգապահական և բարեվարքության կանոնների ապահովման տեսանկյունից կարևոր է 2022 թ.

հունիսին ընդունված՝ ԵՊՀ-ում շահերի բախման բացահայտման և սահմանափակման կանոնակարգի կիրառումը, ինչը պետք է նպաստի համալսարանում շահերի բախման վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը և շահերի բախմանը վերաբերող խնդիրների արդյունավետ հասցեագրմանը:

Ռազմավարական նպատակ 2. Գիտություն և նորարարություն

Խնդիր 1. Կրթություն. զարգացնել հետազոտահենք կրթություն:

Հետազոտահենք կրթության զարգացման նպատակով բոլոր կրթական ծրագրերում արդեն իսկ ներդրված է հետազոտական բաղադրիչ, ինչը նպաստում է ուսանողի հետազոտական կարողությունների ու մասնագիտական հմտությունների զարգացմանը: Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 120 ուսանող ներգրավված է եղել գիտահետազոտական ինստիտուտների հետ համատեղ կատարվող տարբեր հետազոտություններում:

Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ շատ կարևոր են հետազոտական մեթոդների, քննադատական մտածողության, ակադեմիական գրագրության վերաբերյալ սեմինարները, դասընթացներն ու աշխատարանները, որոնք հաշվետու տարում իրականացվել են բոլոր կրթական ստորաբաժանումներում:

Ձեռնարկված քայլերի արդյունքում որպես զեկույց կամ գիտական աշխատանք (հոդված) ՈՒԳԸ կազմակերպած գիտաժողովներում ներկայացվել են 62 ավարտական աշխատանքներ և 3 մագիստրոսական թեզեր, իսկ այլ գիտաժողովներում՝ 26 ավարտական աշխատանքներ և 42 մագիստրոսական թեզեր:

Խնդիր 2. Դոկտորական (ասպիրանտական) կրթություն. դոկտորական կրթությունը համապատասխանեցնել Զալցբուրգյան սկզբունքներին և ներդնել հետդոկտորական հետազոտություն:

Հաշվետու ժամանակահատվածում, «Էրազմուս+» «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան (ARMDOCT)» ծրագրի շրջանակում ԵՊՀ-ն իրականացրել է մի շարք բարեփոխման աշխատանքներ, որոնք հիմնականում ընթացել են երեք առանցքային ուղղություններով՝

1. դոկտորական կրթության կազմակերպման նորմատիվ-իրավական բազայի բարեփոխում,
2. դոկտորական կրթության բովանդակության բարեփոխում,
3. դոկտորական կրթության կազմակերպման տեխնիկական և տեխնոլոգիական բազայի բարեփոխում:

Ծրագրի շրջանակում բարեփոխվել կամ մշակվել է դոկտորական կրթության ոլորտը համակարգող ավելի քան 10 փաստաթղթեր, որոնք առաջիկայում ներկայացվելու են ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը.

- ասպիրանտուրայում և հայցորդության համակարգում կրեդիտային դասընթացների կազմակերպման և անցկացման կարգ ***(նախկինում չի եղել),***
- Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության կազմակերպման, անցկացման և բողոքարկման կարգ ***(լրամշակվել է գործող կարգը),***
- հայցորդի ձևակերպման և ուսումնառության կազմակերպման կարգ ***(նախկինում չի եղել),***
- հետազոտողի պատրաստման կրթական ծրագիր (մասնագիր) ***(նախկինում չի եղել),***
- Երևանի պետական համալսարանում հետազոտողի պատրաստման գիտակրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (նոր խմբագրությամբ) (***էապես բարեփոխվել է),***

- կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ (նոր խմբագրությամբ) (***էապես բարեփոխվել է),***
- առկա և հեռակա ուսուցման ձևերով ասպիրանտների, ինչպես նաև հայցորդների ուսումնական պլաններ ***(նախկինում չի եղել),***
- հետազոտողի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի քարտեզ ***(նախկինում չի եղել),***
- հետազոտողի պատրաստման կրթական ծրագրի օրինակելի ուսումնական պլանի համառոտ ուղեցույց ***(նախկինում չի եղել),***
- դոկտորական կրթության կենտրոնի կանոնադրություն,
- ասպիրանտուրայում ուսումնառության կազմակերպման պայմանների վերաբերյալ պայմանագիր,
- հայցորդության համակարգում ուսումնառության կազմակերպման պայմանների վերաբերյալ պայմանագիր:

Մշակման ավարտական փուլում են ասպիրանտի և հայցորդի ուղեցույցները:



Ինչպես «ARMDOCT» ծրագրի շրջանակում, այնպես էլ գործակցային այլ ձևաչափերով ԵՊՀ-ն էապես վերանայել է ընտրովի դասընթացների ցանկը: Նախորդ դասընթացներից որոշները հանվել են, ներդրվել նորերը: Գործընթացի նպատակն է երրորդ աստիճանի կրթության համապատասխանեցումը միջազգային չափանիշներին և ասպիրանտների/հայցորդների կրթական ու

հետազոտական պահանջներին: Ստորև ներկայացված է պարտադիր և ընտրովի դասընթացների վերանայված ցանկը:

Պարտադիր դասընթացներ՝

1. «Մասնագիտական օտար լեզու»,
2. «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն»,
3. «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ»:

Կամընտրական դասընթացներ՝

1. «Գիտության փիլիսոփայություն»,
2. «Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն»,
3. «Գիտաչափություն և գիտական շտեմարաններ»,
4. «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում»,
5. «Համալսարանական դասավանդման դիդակտիկա»,
6. «Կայուն զարգացում և գլոբալ մարտահրավերներ»,
7. «Անձնային աճ և ինքնակարգավորում»:



Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ասպիրանտների և հայցորդների տվյալների բազայի ստեղծման ուղղությամբ թվայնացման աշխատանքները: Այս գործընթացը չափազանց կարևոր է հայալեզու գիտահետազոտական թվային բազայի համալրման տեսանկյունից, ինչի շնորհիվ

էապես կբարձրանա հայալեզու աշխատանքներում գրագողության էլեկտրոնային գործիքների օգտագործման արդյունավետությունը:

Խնդիր 3. Բարձրորակ մարդկային ռեսուրսներ. մշակել գիտական ներուժի պահպանմանը և զարգացմանն ուղղված քաղաքականություն:

Գիտահետազոտական նախագծերում ինչպես դասախոսական համակազմի, այնպես էլ ուսանողների ներգրավվածության խրախուսման նպատակով շատ կարևոր է գիտական խմբերում ընդգրկված ասպիրանտների և երիտասարդ գիտաշխատողների թվաքանակի աճը: Հաշվետու ժամանակահատվածում այդպիսի աշխատանքներում ներգրավված է եղել 195 երիտասարդ գիտաշխատող, ինչը 15 %-ով գերազանցում է նախորդ հաշվետու ժամանակաշրջանի ցուցիչը:

Այս առումով կարևոր գործիք են նաև ԵՊՀ ներքին դրամաշնորհները: Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում ավելացված 6 դրամաշնորհների շրջանակում գիտահետազոտական աշխատանքներին ներգրավված են եղել 7 ուսանողներ:

Ասպիրանտների և երիտասարդ գիտնականների գործունեության խրախուսման նպատակով կարևոր է նաև դեռևս 2022 թ. փետրվարին ընդունված ԵՊՀ աշխատակիցներին տրամադրվող լրավճարների հաշվարկման և վճարման նոր կարգի կիրառումը: Վերջինիս շրջանակում լրավճարներ են տրամադրվել 808 աշխատակիցների: 2023 թ. փետրվարից գործարկված Ակադեմիական

գրագրության կենտրոնն անցկացրել է նաև ասպիրանտների և հայցորդների հետազոտական կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումների շարք: 2023 թ. փետրվար-հունիս ժամանակահատվածում անցկացվել են 6 դասընթացներ, որոնց մասնացկել են 80 ասպիրանտներ և հայցորդներ:

Խնդիր 4. ԵՊՀ տեսանելիություն. ամրապնդել ԵՊՀ-ի՝ որպես գիտահետազոտական կազմակերպության վարկանիշը:

ԵՊՀ ներկայացուցիչների զգալի մասը ներկայացված է մասնագիտական ցանցերում. «ORCiD», «Research Gate», «Scopus», «Scholar», «MathSciNet», «LinkedIn»: Այնուամենայնիվ, այս ուղղությամբ շարունակական աշխատանքների կարիք կա:



«Մոլդովայի և Հայաստանի բուհերի հետազոտության կառավարման և հանրահասանելի գիտության կարողությունների զարգացում» «Էրազմուս+ ՄԻՆԵՐՎԱ» (MINERVA-Strengthening Research Management and Open Science Capacities of HEIs in Moldova and Armenia (Ref. nr.: 597912-EPP-1-2018-1-MD-EPPKA2-CBHE-SP) of Erasmus+, the Key Action 2 Capacity Building in the field of Higher Education) ծրագրի շրջանակում մշակվել է ԵՊՀ բաց հասանելիության

քաղաքականությունը, ինչի արդյունքում ԵՊՀ բոլոր ամսագրերն անցել են էլեկտրոնային կառավարման և այժմ ունեն բաց հասանելիություն:

ԵՊՀ ռազմավարական խնդիրներից է համալսարանականների կողմից միջազգային վարկանիշային գիտական հանդեսներում հրապարակումների թվաքանակի ավելացումը: ԵՊՀ գիտխորհրդի կողմից հաստատվել է «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման» կարգը, որով, ի լրումն այլ կետերի, սահմանված են «Scopus» շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրապարակումների համար տրվող տարբերակված լրավճարները (Q1-440 000 դրամ, Q2-330 000 դրամ, Q3-220 000 դրամ, Q4-110 000 դրամ): Հաշվետու ժամանակահատվածում լրավճար տրամադրվել է վարկանիշային ամսագրերում 305 հոդվածների հրատարակության համար:

Խնդիր 5. ԵՊՀ ամսագրեր. խթանել ԵՊՀ ամսագրերի թվայնացումը և միջազգայնացումը:

Այս պահին ԵՊՀ 21 ամսագրեր իրենց աշխատանքները ծավալում են «OJS» (Open Journal System) ամսագրերի էլեկտրոնային կառավարման համակարգում: Ամսագրերի որակի բարելավման համատեքստում առաջնային է համարվում գրագողության դեմ պայքարը: ԵՊՀ հրատարակչությունը կիրառում է «iThenticate» (անգլերենով հոդվածների) ու «antiplagiat» (ռուսերենով հոդվածների) համընկնումների և գրագողության բացահայտման համակարգերը:

ԵՊՀ բոլոր ամսագրերի խմբագրակազմերի առնվազն 30 %-ը կազմված է օտարերկրյա մասնագետներից: Միևնույն ժամանակ ԵՊՀ 7 ամսագիր ներառված է 12 միջազգային շտեմարանում, 5 ամսագիր ինդեքսավորվել է «MIAR» տվյալների մատրիցայում, «TSTP» պարբերականը զետեղվել է «DOAJ»-ում, ԵՊՀ 4 ամսագիր գրանցվել է «EPIHplus» հարթակում:

Խնդիր 6. Արդյունավետ և անվտանգ միջավայր. գիտական և կրթական ենթակառուցվածքների տարանջատում:

Գիտական ենթակառուցվածքների արդյունավետ կառավարման և գործունեության լավարկման համատեքստում կարևոր է դրանց միավորումը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված այդ գործընթացի արդյունքում գիտական կենտրոնների թիվը 20-ից դարձել է 9:

Միջգիտակարգային հետազոտությունները խրախուսելու նպատակով կարևոր են միջգիտակարգային ներքին դրամաշնորհները և միջոլորտային լաբորատորիաները: Հաշվետու տարում հաստատված ընդհանուր 6 դրամաշնորհներից 2-ը եղել են միջգիտակարգային, ինչպես նաև ձևավորվել են միջոլորտային 2 հեռավար լաբորատորիաներ:

Խնդիր 7. Համագործակցություն. զարգացնել ԵՊՀ գիտական համագործակցությունը գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում էապես աճել է համագործակցությունը հայաստանյան գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ:

- Գիտահետազոտական ինստիտուտների հետ իրականացվող համատեղ նախագծերի թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 37.7 %-ով՝ կազմելով 98 նախագիծ:

- Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարման նպատակով գիտական հիմնարկներից հրավիրված մասնագետների թիվը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 68:
- Տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող ձեռնարկությունների հետ համագործակցությունը նախորդ տարվա համեմատ աճել է 28.8%-ով՝ կազմելով 102 համատեղ ծրագիր կամ նախաձեռնություն:



Խնդիր 8. Միջազգային համագործակցության խթանում. զարգացնել ԵՊՀ միջազգային գիտական համագործակցությունը արտերկրի համալսարանների, գիտական կենտրոնների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ 606 ներկայացուցիչ մասնակցել է տարաբնույթ միջազգային գիտաժողովների, 208-ը գործուղվել է միջազգային գիտական կենտրոններ:

Ճանապարհորդական դրամաշնորհների տրամադրման միջոցով խրախուսվել է ԵՊՀ գիտաշխատողների մասնակցությունը հեղինակավոր գիտաժողովներին: Այս տեսանկյունից կարևոր է արձանագրել, որ դրամաշնորհների տրամադրման ընթացքում նախապատվությունը տրվել է այն թեկնածուներին, որոնց զեկույցները

պիտի տպագրվեին միջազգային վարկանիշ ունեցող պարբերականներում: Դրամաշնորհների տրամադրման պայմաններից է նաև գիտաժողովների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը գործընկերներին:

Այս ընթացքում կնքվել ու վերակնքվել են միջազգային 22պայմանագրեր: ԵՊՀ-ն այժմ համագործակցում է 49 պետությունների 249 գիտահետազոտական կառույցների հետ:

Խնդիր 9. Կառավարում. իրականացնել գիտահետազոտական գործունեության կառավարման միասնական քաղաքականություն:

Գիտահետազոտական գործունեության կառավարման նպատակով ստեղծվել է Գիտակազմակերպչական խորհուրդը, որի հիմնական նպատակներն են համակարգել գիտական գործընթացի արդյունավետ կազմակերպումը, համապատասխան ակտերի մշակումն ու վերանայումը, ներհամալսարանական ու միջազգային գիտաժողովների կազմակերպումը, ինչպես նաև իրականացնել գիտակազմակերպչական բնույթի այլ գործառույթներ:

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում նախատեսվում է մշակել և գործարկել Մտավոր սեփականության և առևտրայնացման ու Գիտական արդյունքի առևտրայնացման մեթոդաբանությունները:

Խնդիր 10. Հետազոտական բարեվարքություն. իրականացնել գիտահետազոտական գործունեության էթիկական նորմերի գործադրման և բաց գիտական միջավայրի ձևավորման քաղաքականություն:

Բաց գիտական միջավայրի ձևավորման և ակադեմիական գրագրության զարգացման նպատակով օգտագործվում են միջազգային ծրագրերը, որոնց շրջանակում կատարված բարեփոխումները ներառում են «Էրազմուս+» ծրագրի «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» («Armdoct») ծրագրի շրջանակում Ակադեմիական գրագրության կենտրոնի ստեղծումը և «Մոլդովայի և Հայաստանի բուհերի հետազոտության կառավարման և հանրահասանելի գիտության կարողությունների զարգացում» «Էրազմուս+ ՄԻՆԵՐՎԱ» ծրագրի շրջանակում մշակված բաց հասանելիության քաղաքականությունը, որը բաց հասանելիություն է ապահովել ԵՊՀ բոլոր ամսագրերի համար: Առաջիկայում նախատեսվում է մշակել և գործարկել հետազոտությունների կազմակերպման էթիկական նորմերը սահմանող քաղաքականություն, որը ուղղորդող դեր կունենա հետազոտությունների կատարման ընթացքում:

Ռազմավարական նպատակ 3. Հանրային ներգրավում

Խնդիր 1. Կրթական ծրագրեր. ուսումնասիրել հանրային պահանջարկը և աշխատաշուկայի պահանջներին ու ԵՊՀ շահակիցների կարիքներին համապատասխան առաջարկել լրացուցիչ կրթական ծրագրեր:

ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրերի մշտադիտարկման և գնահատման գործընթացի շրջանակում որոշակի աշխատանք է կատարվել հանրային պահանջարկի և աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրման ու վերհանման ուղղությամբ: Մշտադիտարկման գործընթացում ներառվել են շրջանավարտների և գործընկերների կարծիքների հավաքագրման բաղադրիչները, որոնք արտաքին գնահատման հնարավորություն են տալիս կրթական ծրագրերի վերանայման, ինչպես նաև բարելավման համար:

Մշտադիտարկման գործընթացից բացի՝ ԵՊՀ-ն գործընկերների հետ գործակցային ծրագրերի շրջանակում պարբերաբար հավաքագրում է կրթական

ծրագրերի վերաբերյալ գնահատողական բնույթի տեղեկություններ և դրանք օգտագործում ծրագրերի բարելավման ուղղությամբ:

ԵՊՀ կրթական և գիտահետազոտական ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկման պարբերական գործընթացը ներառում է աշխատանք լրատվամիջոցների հետ, սոցիալական ցանցերում տեղեկատվական արշավների կազմակերպում, ինչպես նաև իրազեկման տարաբնույթ միջոցառումներ առաջնային թիրախային խմբերի ներկայացուցիչների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվեց ««ԲանՈՒԳործ». ԵՊՀ էքսպո-2023»-ը, որի շրջանակում ԵՊՀ բոլոր կրթական ստորաբաժանումները ներկայացրին իրենց կրթական ծրագրերը, մասնագիտական զարգացման հնարավորությունները: Միջոցառմանը մասնակցեցին մոտ 20,000 այցելուներ, որոնց մեծ մասը դպրոցականներ էին:

Հաշվետու ժամանակահատվածում կրթական տարբեր ստորաբաժանումներն ու ուսանողական կառույցները կազմակերպել են էքսպոներ և իրազեկման արշավներ:

Լրացուցիչ ծրագրեր են իրականացրել Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը, Շարունակական կրթության կենտրոնը և

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը: Գևորգ Արշակյանի անվան գիտելիքի ամառային դպրոցին մասնակցել է 107 աշակերտ, իսկ Գևորգ Արշակյանի անվան գիտելիքի դպրոցին՝ 210 ուսանող: Շարունակական կրթության կենտրոնը մշակել և հաջողությամբ անցկացրել է «Բնագիտությունը զվարճալի է. տե՛ս, շոշափի՛ր, փորձի՛ր» ամառային դպրոցը: Վերջինիս մասնակցել են հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների 17 սովորողներ: Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը մի շարք միջոցառումներ է կազմակերպել՝ ներգրավելով աշխատաշուկայի ներկայացուցիչներին, ինչպիսիք են, օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ միասնական սոցիալական ծառայությունը, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա», «Արշավներ Ակումբ» տուրիստական ընկերությունները և այլն:

Խնդիր 2. Համագործակցություն. ձևավորել ձեռնարկությունների հետ համագործակցության կայուն համակարգ և նպաստել շահակիցների կարիերայի զարգացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է տարբեր ոլորտների ձեռնարկությունների հետ համատեղ նախագծերի իրականացումը: Այդպիսի նախագծերում ներգրավված ուսանողների թվաքանակն աճել է 18,3 %-ով՝ հաշվետու տարում կազմելով 732 ուսանող: ԵՊՀ շրջանավարտների զբաղվածության և աշխատաշուկայի կարիքների մշտադիտարկման (մոնիթորինգի) ներդրված համակարգն առկա չէ, բայց տարեկան պլանավորման գործընթացի շրջանակում մի շարք ֆակուլտետներ նախաձեռնել են շրջանավարտների վերաբերյալ տվյալների հավաքագրում:

Այս համատեքստում շատ կարևոր է նշել նաև ԵՊՀ շրջանավարտների ցանցի ձևավորման և գործարկման մասին: Ցանցի նպատակն է զարգացնել կապը ԵՊՀ շրջանավարտների հետ, համակարգել, ակտիվացնել և հզորացնել համալսարանական շրջանավարտների համայնքը՝ ստեղծելով զարգացման և հաղորդակցության հավելյալ հնարավորություններ և՛ շրջանավարտների, և՛ համալսարանի համար: 2023 թ. սեպտեմբերին գործարկված առցանց տվյալների բազայում 18.12.2023 թ. դրությամբ գրանցված շրջանավարտների թիվը հասել է 754-ի: Հաջորդ տարի նախատեսվում է նաև շրջանավարտների ֆորումի կազմակերպում, ինչի նպատակով արդեն իսկ ձևավորվել է հանձնաժողով, և մեկնարկել են նախապատրաստական աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում Կենսաբանության ֆակուլտետը կազմակերպել է նաև «BIOEXPO» ցուցահանդեսը, որի միջոցով ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բոլոր ամբիոններում կատարվող գիտական աշխատանքները տարբեր ձևաչափերի՝ գիտափորձերի, պաստառային ցուցադրությունների, տեսանյութերի և տպագրված հոդվածների միջոցով ներկայացվել են այցելուներին:

2022-2023 ուստարվա ընթացքում Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել և իրականացվել են 34 լրացուցիչ

պրակտիկաներ (փորձնակություն, մենթորություն և այլն), որոնց մասնակցել են շուրջ 84 ուսանողներ:

Խնդիր 3. Լրացուցիչ ծառայություններ. կատարելագործել ոչ ֆորմալ կրթական և խորհրդատվական ծառայությունների համակարգը:

Համալսարանի մի շարք ստորաբաժանումներ (Կենսաբանության ֆակուլտետ, Ֆարմացիայի ինստիտուտ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ) տրամադրում են խորհրդատվական ծառայություններ շահակիցների լայն շրջանակի, մասնավորապես՝ փորձագիտական եզրակացություններ, այդ թվում՝ պետական կառավարման տարբեր մարմիններին: Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտը մեկնարկել է ԴՈՀ (դեղերի որակի հսկում) և ՄԳՈՒԿՎ (Մոնիթորինգի գիտաուսումնական կենտրոնի վերլուծական լաբորատորիա) լաբորատորիայի հավատարմագրման գործընթաց, որը հաջող իրագործելու պարագայում հնարավորություն կստեղծվի մեծացնելու ոլորտին տրամադրվող ծառայությունների շրջանակն ու ծավալը:

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը մշտապես իրականացնում է ուսանողների կարիերայի խթանմանը միտված միջոցառումներ ու խորհրդատվություններ: Հաշվետու ժամանակահատվածում խորհրդատվություն են ստացել 50 ուսանողներ, կազմակերպվել են 30-ից ավելի հանդիպումներ գործատուների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ շարունակական կրթության կենտրոնն իրականացրել է մի շարք միջոցառումներ և մատուցել ոչ ֆորմալ կրթական ծառայություններ արտաքին շահակիցների համար:

«Դի-Վի-Վի Ինթերնեյշնլ» կազմակերպության հետ համագործակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակում ԵՊՀ չորս ֆակուլտետների (Փիլիսոփայության և հոգեբանության, Ժուռնալիստիկայի, Տնտեսագիտության և կառավարման, Սոցիոլոգիայի) դասախոսներից և ուսանողներից բաղկացած հինգ հետազոտական թիմեր կատարել են մեծահասակների կրթության տարբեր թեմաների առնչվող հետազոտական աշխատանքներ: Հետազոտության արդյունքները պիտի ամփոփվեին 2023 թ. հոկտեմբերին կայանալիք «Մարաքեշ 2022-Երևան 2023. մեծահասակների ուսումնառության և կրթության գլոբալ և լոկալ միտումներ» համաժողովի ժամանակ, սակայն

արցախահայության տեղահանմամբ պայմանավորված՝ համաժողովը հետաձգվեց մինչև 2024 թ. հունվար: Դրամաշնորհային ընդհանուր ֆոնդը կազմել է շուրջ 12,000 եվրո:

«Դի-Վի-Վի Ինթերնեյշնլ» կազմակերպության հետ համագործակցության շրջանակում 2023 թ. հուլիսի 10-ից հոկտեմբերի 8-ը անցկացվել է «Մեծահասակների ուսումնառության և կրթության հիմունքներ.դասավանդման մեթոդաբանություն» ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հաստատված «Curriculum Globale» չափորոշչի վրա հիմնված 12-շաբաթյա դասընթացը, որին մասնակցել է ԵՊՀ տարբեր ֆակուլտետների 19 դասախոս:

Հրավիրյալ/օտարերկրյա դասախոսների մասնակցությամբ անցկացվել են դասախոսների վերապատրաստումներ և դասախոսություններ/սեմինարներ /աշխատարաններ հետևյալ թեմաներով.

- «Ժամանակակից տնտեսագիտական սոցիոլոգիա», մասնակցել է 19 դասախոս, հունիսի 26-30,
- «Ինչպես օգտագործել ականատեսների վկայությունները պատմություն դասավանդելիս»,5 մասնակից, հունիսի 20,
- «Ինչպես են հասարակությունները հիշում և մոռանում», 13 մասնակից, հունիսի 26,
- «Համատեքստային և զարգացման մոդելը՝ հասկանալու համար տարատեսակ և համալիր տրավմատիկ փորձառություններով պայմանավորված ազդեցությունները» խորագրով քննարկում:

2023 թ. հուլիսին կայացել է առաջին «Բնագիտությունը զվարճալի՞ է. տե՛ս, շոշափի՛ր, փորձի՛ր» ամառային աշխատարանը՝ նախատեսված 8-12-րդ դասարանների սովորողների համար: Հանրակրթական դպրոցների շուրջ 17 աշակերտ երեք շաբաթվա ընթացքում գործնական փորձերի միջոցով առնչվեց ֆիզիկային, քիմիային, երկրաբանությանը, կենսաբանական գիտություններին: Ելնելով այս հաջողված փորձից՝ ՇԿԿ-ն դպրոցականների համար նոր փաթեթներ է մշակել, որոնք իրականացվելու են 2024 թ. ամռանը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարբեր կառույցների 121 քաղծառայողների համար ՇԿԿ-ի նախաձեռնությամբ անցկացվել է 23 դասընթաց տարբեր թեմաներով:

Դասավանդման մեթոդաբանության վերաբերյալ 2 դասընթաց է անցկացվել «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի 40 դասախոսների համար:

Խնդիր 4. Բարձրորակ մարդկային ռեսուրսներ. նպաստել աշխատողների կենսամակարդակի բարձրացմանը և բարելավել աշխատանքային միջավայրը:

ԵՊՀ աշխատողների համար սոցիալական բազմաբնույթ ծրագրերի իրականացման համատեքստում կարևոր է դեռ 2022 թ. գործարկված առողջության ապահովագրությունը, որը շարունակվել է նաև հաշվետու ժամանակահատվածում: Դրանից օգտվել է 1920 աշխատակից: ԵՊՀ աշխատակիցները արտոնյալ պայմաններով շարունակել են օգտվել և կազմակերպել իրենց հանգիստը Ծաղկաձորի և Բյուրականի ուսումնաարտադրական բազաներում:

Ինչպես նախորդ տարի, այս տարի ևս ԵՊՀ աշխատողների հիմնական աշխատավարձը բարձրացվել է 10 %-ով:

Խնդիր 5. Ենթակառուցվածքներ և ծառայություններ. բարելավել ԵՊՀ աշխատողների գործունեությունը և սովորողների ուսումնառությունը խթանող պայմանները՝ ապահովելով դրանց վերաբերյալ տեղեկությունների հասանելիությունը:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Բյուրականի ուսումնաարտադրական բազայի հիմնանորոգման աշխատանքները:

ԵՊՀ ներքին և արտաքին շահակիցների գործակցությամբ նորոգվել և կահավորվել են գրադարանի 3 նոր ընթերցասրահները, որոնք բոլորն էլ այժմ գործում են: Ընդ որում՝ աշխատաժամերի ավելացման շնորհիվ դրանք այժմ գործում են մինչև ժամը 21:00-ն:

ԵՊՀ Դիլիջանի հանգստյան տան վերակառուցման և արդիականացման նպատակով մշակվել է նոր նախագիծ:

ԵՊՀ տարածքում և հանգստյան գոտիներում անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով ավելացվել է ԵՊՀ ընդհանուր տարածքի տեսավերահսկման մակերեսը:

Արտակարգ իրավիճակներում արագորեն կողմնորոշվելու և անհրաժեշտ գործողություններ կատարելու կարողությունների զարգացմանը միտված իրականացվել է «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը հակառակորդի հարձակման դեպքում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությունը: Միևնույն ժամանակ ԵՊՀ բոլոր սովորողները իրենց կրթական ծրագրերի շրջանակում մասնակցում են քաղաքացիական պաշտպանության և առաջին բուժօգնության դասընթացներին, որոնց գործնական պարապմունքներն ուղղված են սովորողների շրջանում արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու և պատշաճ արձագանքելու կարողության զարգացմանը:

Խնդիր 6. Միջազգայնացում. ապահովել միջազգայնացման քաղաքականությանը և ենթակառուցվածքների զարգացմանը նպաստող միջավայր:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է նախնական հետազոտություն Միջազգայնացման բենչմարքինգի կարգի մշակման համար: Ուսումնասիրվել է ինչպես ԵՊՀ առկա միջազգային համագործակցության շրջանակը, այնպես էլ դրա ընդլայնման և ԵՊՀ պահանջներին համապատասխանեցման առաջնահերթությունները: Ռազմավարական պլանավորման ընթացքում կրթական և վարչական ստորաբաժանումների հետ դուրս են բերվել միջազգայնացման առաջնահերթությունները՝ ըստ ոլորտների և գործառույթների:

Խնդիր 7. ԵՊՀ վարկանիշի բարձրացում. բարձրացնել համալսարանի միջազգային տեսանելիությունը և գրավչությունը*:*

«QS World University Rankings»-ում ԵՊՀ-ն 415-րդ տեղում է՝ 690 եվրոպական հաստատությունների շարքում, այն առաջինն է հայաստանյան 3 հաստատությունների շարքում և 1001-1200-ը՝ աշխարհում:

2022-2023 ուստարում ԵՊՀ-ում ուսանել է 397 օտարերկրյա սովորող (բակալավրիատի առկա համակարգում՝ 164, հեռակա համակարգում՝ 25,

փորձնակներ՝ 11, նախապատրաստական դասընթացներում՝ 15, մագիստրատուրայի առկա համակարգում՝ 40, հեռակա համակարգում՝ 8, Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի սովորողներ՝ 19, ասպիրանտներ՝ 10):

ԵՊՀ-ն ներկայացված է «Ֆեյսբուք», «Ինստագրամ», «Յութուբ», «Տելեգրամ» հարթակներում: Գործարկվել է ԵՊՀ նոր կայքէջը, որի նյութերի մոտ 90 %-ը ներկայացված է երեք լեզուներով:

Մեկնարկել է ԵՊՀ հաղորդակցության ռազմավարության մշակումը, որը սահմանելու է հաղորդակցական հիմնական առաջնահերթությունները և սկզբունքները:

Խնդիր 8. Կառավարում. ներդնել և զարգացնել ԵՊՀ հաղորդակցման և էլեկտրոնային կառավարման ընդհանուր համակարգ և ապահովել դրա արդյունավետ գործառությունը բուհի կառավարման բոլոր մակարդակներում:

Հաշվետու ժամանակահատվածում նախապատրաստական աշխատանքներ են տարվել ԵՊՀ հաղորդակցման և էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի ստեղծման ուղղությամբ: Ռազմավարական պլանավորման կենտրոնը կատարել է տվյալների ծագման և շրջանառության ընթացքի ուսումնասիրություն, ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների համատեղ քննարկումների միջոցով մշակվել են միասնական հարթակի գործառնական առաջնահերթությունները և առկա տեղեկատվական բազաների ու թվային հարթակների համադրման հնարավորությունները: Հաջորդ հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է ստեղծել տվյալների միասնական դինամիկ բազա, որի միջոցով կբարձրանա տվյալների համաժամանակեցման մակարդակը, և կբարելավվի ԵՊՀ ներքին հաղորդակցությունը: